Ա. Ս. Տվերիտինովայի սույն հոդվածի հայերեն թարգմանությունը նպատակ ունի նախ եւ առաջ հայ ընթերցողին ցույց տալու թուրքական պատմագրության քաղաքական ու գաղափարական երեսը: Հոդվածի հեղինակը լավագույնս փիրապետում է Օսմանյան կայսրության առաջացման ու ձեւավորման վերաբերյալ առկա բոլոր սկզբնաղբյուրներին եւ դրանց մանրակրկիտ վերլուծությամբ վերհանում է քեմալական ժամանակաշրջանի թուրք պատմաբանների քաղաքականացված «պատմագիտական» հայեցակարգը:

Չնայած հոդվածն ինչ-որ իմաստով գրված է կոմունիստական գաղափարախոսության ուժեղ ազդեցության տակ, սակայն ըստ էության, պատմական մեթոդի առումով, այսօր էլ չի կորցրել իր կարեւորությունը:

Ռուսերեն բնագիրը տես՝ А. С. Тверитинова, “Фальсификация истории средневековой Турции в кемалистской историографии”. Византийский Временник, т. VII, Москва, 1953, с. 9-31:

Խմբագրություն

Ա. Ս. ՏՎԵՐԻՏԻՆՈՎԱ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԵՄԱԼԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վերջին տասնամյակներում Թուրքիայում ռասիզմի եւ պանթյուրքիզմի հետադիմական գաղափարախոսության քարոզչությունն ուղեկցվում է թուրքական միջնադարյան պատմության բնագավառում «գիտական» հիմնարար ուսումնասիրություններով: Ընդ որում, թուրքական միջնադարի շուրջ նախկին հայացքները, որոնք ամրագրված էին եւրոպական բուրժուական պատմական գրականության մեջ եւ ընդունվում էին մինչքեմալական թուրք պատմաբանների կողմից, ենթարկվում են արմատական վերանայման: Այժմ քեմալական բուրժուա-ազգայնական պատմաբաններին եւ նրանց պատվիրատուներին չի կարող բավարարել սուլթանների եւ նրանց արշավանքների պարզ շարադրումը, որով նախկինում սահմանափակվում էր բուրժուական պատմագրությունը: «Ժամանակակից պատմության համար նշանակություն չունեն փաղիշահները եւ նրանց արքայատոհմերը: Մեծ թուրքական արշավանքները, նվաճումները եւ թուրքական քաղաքակրթությունն ունեն նաեւ սոցիալական ու տնտեսական պատճառներ», - ասում են նրանք[1]: Այսպիսով՝

1 Տե՛ս **Çeşit Saffet**, Türklük ve türkçülük izleri, Ankara, 1930, 1-nci kitap, էջ 10:

քեմալական պատմաբանները, թվում է՝ միջնադարյան Թուրքիայի պատմության առավել խորը լուսաբանման հայց են ներկայացնում: Մինչդեռ, իրականում սոցիալական եւ տնտեսական խնդիրներին անդրադարձն անհրաժեշտ է քեմալական պատմաբաններին միայն, որ դրանք ներկայացվեն խեղաթյուրված, եւ առաջին հերթին փորձ կատարվի բուրժուա-ազգայնական քարոզչության խնդիրներին համահունչ ապացուցել, թե իբր թուրքերը Փոքր Ասիայում հայտնվելու պահին սոցիալ-տնտեսական զարգացման առավել բարձր մակարդակ ունեին, քան Բյուզանդիայի եւ Բալկանյան թերակղզու երկրների ժողովուրդները, եւ որ դրա արդյունքում թուրքերը բերեցին «պետական կազմակերպման առավել կատարյալ ձեւեր», որոնցով «բարեգործություն արեցին» իրենց կողմից նվաճված ժողովուրդներին: Երկրորդ՝ թուրք նվաճողները, իրենց հետ բերելով պետական կյանքի «ավելի կատարյալ ձեւեր», հանդես եկան իբրեւ ֆեոդալների կողմից ճնշված Բյուզանդիայի եւ Բալկանյան թերակղզու ժողովուրդների «ազատարարներ»: Երրորդ՝ թուրքական պետությանը, համաձայն թուրքերի «ազգայնական» ավանդույթներին, իբր անծանոթ էին դասակարգային հակասություններն ու պայքարը. հասարակությունից վեր կանգնած լինելով՝ այն իբր թե բոլոր հպատակների սոցիալական եւ ազգային շահերի «իդեալական ներդաշնակության անաչառ կազմակերպիչն էր»: Վերջապես չորրորդ՝ Օսմանյան կայսրության անկման եւ կազմալուծման պատճառը պետության իշխող խավի հեռանալն էր պետական կառավարման «ավանդական ազգայնական» սկզբունքներից: Նշված սկզբունքներից հեռանալը բացատրվում էր նրանով, որ իբրեւ թե Օսմանյան կայսրության ղեկավար օղակներ էին ներխուժել օտարածին, ոչ թուրքական միջավայրի տարրեր, որոնք անտարբեր էին թուրք ազգի ճակատագրի հանդեպ[2]:

Այս դիտավորյալ սուտ հայեցակարգի հիման վրա են արվում քեմալականների համար անհրաժեշտ ռասիստական եւ պարզապես բացահայտ հետադիմական եզրահանգումներ: Նրանց պնդմամբ՝ միայն պետական կյանքի նախկին «ազգայնական» սկզբունքներին վերադարձը կապահովի թուրք ժողովրդի բարեկեցությունն ու բարգավաճումն ապագայում: Վերադարձ հասարակական-քաղաքական կյանքի միջնադարյան ձեւերին, սակայն ավելի բարձր «եւրոպական» մշակութային մակարդակով. ահա այն կատարելատիպը, որին խորհուրդ են տալիս ձգտել բուրժուա-ազգայնականները թուրք ժողովրդին:

Սակայն բավ է միայն ուշադիր վերլուծել թուրք ընկերաբան-ազգայնականների վերը թվարկած պնդումներից յուրաքանչյուրը, որպեսզի համոզ-

2 Թեեւ հեղինակն օգտագործում է Միջնադարյան Թուրքիա եւ թուրք եզրույթները, հարկ ենք համարում նշել, որ տվյալ ժամանակահատվածում երկիրն անվանվել է Օսմանյան կայսրություն կամ Օսմանյան պետություն, իսկ նրա հսկայածավալ տարածքում բնակվող ժողովուրդներին բաժանել են ոչ թե էթնիկ, այլ կրոնական սկզբունքով՝ մուսուլման եւ ոչ մուսուլման (Müslim ve Gayrimüslim), ծնթ. թրգմն.:

վենք, որ գործ ունենք պատմության ամենաանամոթ կեղծարարության հետ. այս կեղծարարությունը նախաձեռնում են թուրքական բուրժուազիայի գիտական սպասավորները՝ սոցիալական դատարկաբանության եւ աշխատավորների դասակարգային գիտակցության վրա ստվեր գցելու, թուրք բուրժուա ղեկավարների հետադիմական, ազգայնամոլական ուղին արդարացնելու նպատակներով: Անդրադառնանք պատմական փաստերին եւ տեսնենք՝ որքանո՛վ են դրանք համընկնում քեմալական պատմաբանների պնդումներին:

Ինչպես տեսնում ենք, առաջին պնդումն այն է, որ թուրքերն իրենց կողմից Փոքր Ասիայի նվաճման պահին իբր սոցիալ-տնտեսական զարգացման առավել բարձր մակարդակ ունեին եւ տիրապետում էին հասարակական-քաղաքական կյանքի ավելի կատարյալ ձեւերի, որոնք եւ փոխանցել են նվաճված ժողովուրդներին: Այս դրույթը, որպես հիմնական, կարող ենք հանդիպել Թուրքիայի միջնադարյան պատմության ուսումնասիրությամբ զբաղվող յուրաքանչյուր ժամանակակից թուրք պատմաբանի երկում:

Եթե արեւմտաեւրոպացի բուրժուա արեւելագետները՝ Թուրքիայի պատմության մասնագետները (Գիբբոն, Գիզե, Մարկվարտ, Դենի, Դիլ, Կրամերս, Յորգա եւ այլք), թուրքական պետության զարգացումը գլխավորապես բացատրում էին արտաքին բազմապիսի ազդեցություններով եւ նվաճված կամ հարեւան ժողովուրդներից ներպետական կազմակերպման այս կամ այն գծերի փոխառություններով (դրան էր, ըստ էության, հանգեցվում միջնադարյան Թուրքիայի ներքին պատմությունը վերոնշյալ գիտնականների նկարագրմամբ), ապա ժամանակակից թուրք պատմաբանները, հակառակը, մերժում են թուրքերի կողմից նվաճված ժողովուրդների՝ հաղթողների հասարակական կառուցվածքի եւ մշակույթի վրա ազդեցության որեւէ հնարավորություն: Նմանատիպ պնդումների սկիզբը դրեց ազգայնականներից առավել մոլի պատմաբան Մեհմեդ Քյոփրյուլյուն, որը 1931 թ. այս թեմայով հատուկ հոդված տպագրեց՝ «Թուրքական ինստիտուտների վրա բյուզանդական ինստիտուտների ազդեցության մասին»[3]: Այս հոդվածում Քյոփրյուլյուն հայտարարեց, որ եւրոպացի հեղինակների բոլոր եզրահանգումներն այն մասին, թե թուրքերը պետական կառավարման շատ ձեւեր փոխառել են բյուզանդացիներից եւ Հարավ-արեւելյան Եւրոպայի ժողովուրդներից, «ամբողջությամբ հակասում են պատմական մտածողությանը եւ հենվում են սխալ պատկերացումների վրա: «Սխալ է, - գրում էր նա, - Օսմանյան պետությունը ծագած համարել մի փոքր ցեղից, որը բնակություն էր հաստատել Բյուզանդիայի սահմանին՝ Անատոլիայի արեւմտյան մասում»[4]:

3 **Mehmet Fuat Köprülüzade**, Bizans Müesseselerinin Osmanlı Müesseselerine Te'siri Hakkında bazı mülâhazalar. Türk Nukuk ve iktisat tarihi Mecmuası, 1931, cilt I, p. 165-313.

4 **M. F. Köprülü** , s. 181. այս նույն տեսակետը նա զարգացնում էր իր «Les origines de l'Empire Ottoman»,

Սրա փոխարեն Քյոփրյուլյուն առաջարկեց «գենետիկորեն» քննարկել թուրքերի մոտ սոցիալ-տնտեսական հարաբերությունների եւ ռազմաքաղաքական կառույցի ձեւերը, այսինքն իրավահաջորդությամբ՝ մեկ «թուրքական» պետությունից մյուսը՝ սկսելով հոներից եւ ավարտելով օսմանյան թուրքերով[5]: Այս տեսակետը Քյոփրյուլյուն իր հայտնաբերած «գենետիկ» մեթոդի օգնությամբ փորձում էր հիմնավորել Ստամբուլում կայացած պատմագիտական II կոնգրեսում (1937 թ.)՝ թուրքական միջնադարյան իրավական կառույցներին նվիրված զեկույցում[6]: Մ. Քյոփրյուլյուի հայտնաբերած խորը հակագիտական «տեսության» էությունը հետեւյալն է. Փոքր Ասիայի թուրք նվաճողներն իբր իրենց հնադարյան նախնիներից «ժառանգել են» ինչ-որ «յուրահատուկ», միայն թուրքական ռասային բնորոշ գծեր, որոնք արտահայտվում էին պալատական կյանքի, ռազմավարչական համակարգի, դատահիրավական հաստատությունների, ինչպես նաեւ բնակչությունից հարկահանման համակարգի հատուկ կազմակերպման մեջ[7]: Այս «տեսության» ագրեսիվ եւ հետադիմական բնույթը կասկած չի հարուցում:

Կեղծ պնդումն այն մասին, թե Բյուզանդիայի եւ Բալկանյան թերակղզու նվաճման ժամանակ թուրքերին բնորոշ էին հասարակական-քաղաքական կյանքի ավելի բարձր ձեւեր, քան նվաճված ժողովուրդներին, հիմնված է պատմական փաստերի ուղղակի կեղծարարության վրա: Հայտնի է, որ Բյուզանդական կայսրությունը եւ Բալկանյան թերակղզու երկրները թուրքերի նվաճման ժամանակ լիարժեք զարգացած եւ հասուն ֆեոդալական հարաբերություններով պետություններ էին: Թուրքական հարձակման իրականացումը հեշտացրած երկպառակչական պատերազմներն ու ֆեոդալ հողատերերի ներքին կռիվները, ճորտատիրական հիմքի վրա դաժան ֆեոդալական լուծն այն ժամանակների համար Բյուզանդիայի եւ Բալկանյան թերակղզու հետամնացության արտահայտություն չէին, ինչպես դա փորձում են ներկայացնել քեմալական պատմաբանները:

Այսպես, Թուրքական պատմագիտական ընկերության պաշտոնին Քեմալի կողմից առաջադրված եւ բուրժուա-ազգայանական, ֆաշիստական հետադիմական «տեսությունների» քարոզչության հարցում նրա մտերիմ համախոհը դարձած «պրոֆեսոր» Աֆեթ Ինանը հատուկ ջանասիրությամբ փորձում էր ապացուցել թուրք նվաճողների բազմակողմանի «առավելությունը» նվաճված ժողովուրդների նկատմամբ: «Եւրոպական ֆեոդալական վարչարարական համակարգ ունեցող քաղաքական կազմակերպություններին, - գրում էր

Paris, 1935. աշխատության մեջ:

5 Տե՛ս անդ:

6 Տե՛ս **M. F. Köprülü**, Ortazaman Türk Hukuk Müesseseleri. İkinci Türk Tarih Kongresi, İstanbul, 1943, էջ 383-418:

7 Տե՛ս անդ, էջ 405:

նա, - նրանք (թուրքերը - Ա. Տ.) բերեցին նոր ձեւ, որը պետք է նոր օրինակ ծառայեր... կենտրոնական միապետության տիպով»[8]:

Վերոնշյալ մոլի պանթյուրքիստ եւ ռասիստ Մ. Քյոփրյուլյուն, որ պաշտոնական «գիտության» բնագավառում հետադիմական «տեսությունների» քարոզչությունից այժմ անցավ հետադիմական քաղաքական գործունեության՝ որպես մոնոպոլիստ ԱՄՆ-ի առջեւ ստրկություն անող Մենդերեսի կառավարության արտաքին գործերի նախարար, կտրուկ հայտարարեց. «Այն փաստը, որ միջնադարյան թուրքերը նոր ժամանակների Եւրոպային բացարձակ միապետության օրինակ են ներկայացրել, խոսում է թուրքերի ակնհայտ առավելության մասին՝ նրանց մոտ առկա հասարակ իրավունքի եւ քաղաքական մշակույթի զարգացման տեսանկյունից»[9]:

Այս պաշտոնական տեսակետը տարբեր կերպերով ու դիտանկյուններով քարոզվում է պատմության քեմալական կեղծարարների բոլոր աշխատանքներում՝ անհիմն պնդելով, որ «թուրք ազգն իր հարձակումների ժամանակ միշտ եւ ամենուր եղել է առաջադեմ մշակույթի կրող»[10]...

Վերեւում նշեցինք, որ ռազմաքաղաքական թուլությունը Բյուզանդիայի, Սերբիայի եւ Բուլղարիայի, որոնց հետ առաջին հերթին բախվեցին թուրք նվաճողները, բնավ սոցիալ-տնտեսական եւ մշակութային հետամնացության արտահայտությունը չէր: Հայտնի է, որ նրանք բազմակողմանի զարգացած տնտեսությամբ եւ մշակույթով պետություններ էին. այս մասին են վկայում գրի, արվեստի եւ նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձաններ, որոնք վաղուց եւ լայնորեն հայտնի են գիտությանը: Սակայն քեմալական պատմաբանները, հաշվի չառնելով հայտնի փաստերը, Բյուզանդիայի ֆեոդալական մասնատվածությունը հայտարարում են թերզարգացածության նշան եւ փորձում են հակադրել այն Փոքր Ասիայի Սելջուկյանների պետությանը՝ որպես «զերզարգացած եւ կենտրոնացված պետական օրգանիզմ», որն իրենց կարծիքով հիմք հանդիսացավ Օսմանաթուրքական պետության ձեւավորման համար:

Զարգացած ֆեոդալիզմի աստիճանում գտնվող Բյուզանդիայի, որի խորքերում արդեն նկատվում էին նոր բուրժուական հարաբերությունների տարրեր, եւ Փոքր Ասիայում ցրված օղուզական ցեղերի պետական միավոր Սելջուկյան սուլթանության, որում դեռ արտակարգ ուժեղ էին նահապետական հարաբերությունները, համեմատությունն ինքնին պատմական զարգացման տարբեր աստիճաններում գտնվող երկու պետական մարմնի ցուցիչն է. նույնպես եւ հակառակ գոյություն ունեցող օբյեկտիվ պատմական փաստերին՝ սել-

8 **Afet (İnan),** Osmanlı-Türk Tarihinin karakteristik Hatları, Belleten, c. II, N 5-6, 1938, p. 125.

9 **M. F. Köprülü,** Ortazaiman Türk Hukuk Müesseseleri, s. 417.

10 **Tayib Gokbilgin,** Macaristandaki türk hakimiyeti devrine ait bazı notlar. Türkiyat Mecmuası, c. VII-VIII, cüz I, 1942, s. 210.

ջուկների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակն իրականից ավելի բարձր ներկայացնելու ձգտումն այս կետում քեմալական պատմաբանների հայեցակարգը լիովին հակագիտական եւ անհիմն է դարձնում:

Փաստ է, որ սելջուկյան ցրված ցեղերի մոտ պետական միատարրության հետք անգամ չկար, իսկ քոչվորական անասնապահական տնտեսության եւ ծայրաստիճան հետամնաց հողագործական տեխնիկայի պարզունակությունը նրանց տնտեսական եւ մշակութային զարգացման ցածր մակարդակի վառ վկայությունն է:

Եթե Սելջուկյան պետության մայրաքաղաք Քոնիայի հարակից տարածքներում դեռ կարելի էր հայտնաբերել պետական կենտրոնացման որոշ տարրեր, ապա գավառներն ու արվարձանները նույնիսկ չնչին չափով չեն ենթարկվել միավորման գործընթացին:

Տարատեսակ աղբյուրների ուսումնասիրության վրա հիմնված ակադեմիկոս Վ. Ա. Գորդլեւսկու «Փոքր Ասիայի Սելջուկյան պետություն» ուսումնասիրությունը տալիս է այդ պետության իրական պատկերը: «Ծայրամասերում, լեռներում կենտրոնական իշխանության հեղինակությունը չնչին էր... Կենտրոնից հեռու՝ պետության ծայրամասերում, օղուզները միասնական էին ապրում: Այնտեղ կային դատարկ հողեր, որտեղ հանգիստ արածում էին նրանց նախիրները. այստեղ ուժեղ էր ցեղապետերի՝ «բեյերի» իշխանությունը... Օղուզները կազմում էին «իլ»՝ ցեղային միավորում... այստեղ օղուզները «հարձակումներ» (աքըն) էին իրականացնում հարեւանների վրա: Կյանքն անցնում էր... հանգիստ՝ ազատ կենտրոնական իշխանության կանոնակարգից»: Եւ այնուհետեւ՝ «Առկա էր մշտական պայքար... Այստեղ էին ծնվում հերոս-հսկաները (ալփը)... Սակայն լինեին դրանք ալփըներ թե գազիներ, միեւնույնն է, նրանց մտքերն ուղղված էին պատերազմին, կողոպուտին, եւ հայտարարելով «ղազավաթ»՝ անհավատների դեմ պատերազմ՝ սուլթանը ցանկանում էր, որ իր «մարդուկները» կերակրվեն»[11]:

Սելջուկյան պետությունում դեռ գործում էր օղուզական քոչվոր ցեղերի հին սովորութային իրավունքը՝ թյուրեն: Այս պետության սոցիալ-քաղաքական կյանքում կարեւոր դեր էր շարունակում խաղալ միջցեղային մարմինը՝ «քուրուլթայ»-ը՝ միջցեղային ժողովի գործառույթներ իրականացնող ավագների խորհուրդը, որի ժամանակ տեղի էր ունենում խանի հռչակումը[12]:

Իհարկե, կազմակերպման այս նահապետական ձեւերի մեջ հետզհետե ներթափանցում է նոր սոցիալական բովանդակություն, քանի որ ավագների խորհուրդը եւ ընտրված խանն արդեն ներկայացնում էին ցեղային վերնախավի շահերը եւ ոչ թե՝ ժողովրդի: Սակայն այս բոլոր վերապրուկային նահապետական ինստիտուտների առկայությունը վառ ապացույց է, որ այս-

11 **В. А. Гордлевский,** Государство Сельджукидов Малой Азии, Л., 1941, с. 46-47.
12 Տե՛ս անդ, էջ 59:

տեղ գործ ունենք ոչ թե զարգացած ֆեոդալական, այլ կիսանահապետական-կիսաֆեոդալական հասարակության հետ: Սելջուկյան պետությունում կիսաինքնուրույն բազմաթիվ ցեղերի անցողիկ եւ ժամանակավոր միավորումն ուղղակիորեն կապված էր ցեղային ազնվականության՝ դեպի հարեւան ժողովուրդների հողեր կողոպտիչ արշավանքների կամ համատեղ պաշտպանության կազմակերպման նպատակների հետ: Այս միության տնտեսական եւ քաղաքական հիմքերը չափազանց փխրուն էին, քանի որ բազմազգ եւ բազմացեղ պետության մեջ իրական տնտեսական եւ քաղաքական ընդհանրություն գոյություն չուներ: Սելջուկյան պետության ողջ պատմությունը բնորոշվում է հարեւանների վրա հարձակումներ գործելով եւ առանձին տոհմերի ու ցեղերի միջեւ անվերջ պատերազմներով[13]:

Այսպիսով, քեմալական պատմաբանները Սելջուկյան պետության այդ աստիճան կենտրոնացման եւ կազմակերպման մասին խոսելու որեւէ գիտական հիմք չունեն:

Սուլթանական փխրուն իշխանության անկման հետ 1308 թ. ընկավ Սելջուկյան պետությունը եւ նրա տարածքում առաջացան տասնյակից ավելի՝ ոչնչով միմյանց հետ կապ չունեցող ու փոխադարձ թշնամություն տածող էմիրություններ: Էմիրությունների կազմակերպման հիմքում ընկած էր ոչ միայն տարածքային, այլ նաեւ ցեղային սկզբունքը, ինչն արտահայտվում էր նրանով, որ միավորումը տեղի էր ունենում ղեկավարող տոհմի շուրջ: Այդ իսկ պատճառով էմիրության անվանումը կապվում էր ոչ թե տարածքի, այլ տոհմի անվան հետ (Օսման-օղուլլարը, Քարեսի-օղուլլարը, Սարուհան-օղուլլարը եւ այլն): Մասնատված կիսաֆեոդալական էմիրություններ, որոնց բնակչությունն զբաղվում էր գլխավորապես անասնապահությամբ, իսկ մասամբ էլ՝ ռազմական թալանով. ահա այսպիսին էր այն «ժառանգությունը», որ սելջուկները թողել էին Օսմանյան պետությանը, որն սկսեց վերելք ապրել ԺԴ. դ. սկզբին:

Մենք չենք քննարկելու այն հարցը, թե ինչու եւ ինչ պայմաններում ԺԳ. դ. վերջում Սելջուկյան սուլթանության սահմաններում ձեւավորվեց Օսմանյան էմիրությունը: Աղբյուրներից պարզ երեւում է, որ նրա կախվածությունը Քոնիայի սուլթանությունից, ինչպես նաեւ շատ այլ սահմանային էմիրություններից, նվազագույն էր: Այս էմիրության տարածքը շատ փոքր էր եւ սահմանափակվում էր ձմեռային քոչվորությամբ՝ Սեգուդայի շրջանում եւ ամառայինով՝ Բյութանիա մարզին հարակից Թումանիջ եւ Էրմենի լեռներում[14]:

Օսմանյան էմիրության ներքին կառավարումն իր զարգացման նախնական փուլում բավականին պարզունակ էր: Առաջին օսմանյան կառավարիչնե-

13 Տե՛ս **В. А. Гордлевский,** Указ. соч., էջ 49:
14 توار يخ آل عثمان - اوروج بن عادل Изд. Fr. Banger. Hannover, 1925, s. 7.

ը՝ Օսմանը, Օրհանը, իսկ որոշ ժամանակ նաեւ Մուրադը, դեռ չէին կրում սուլթանի տիտղոս: Ինչպես էմիրությունների այլ կառավարիչներ, նրանք եւս անվանվում էին բեյեր կամ էմիրներ[15]: Բեյի հեղինակությունն այդ շրջանում հիմնվում էր մանր քոչվոր ցեղերի վերնախավի կողմից ընտրված ընդհանուր հրամանատարի իշխանության ճանաչման առավելապես նահապետական սովորության վրա: Ճիշտ է՝ ժամանակի ընթացքում բեյի կոչումը դարձավ ժառանգական, սակայն կան տվյալներ, որոնք վկայում են այն մասին, թե Օսմանը բեյի կոչումն ստացել է «ուչբեյերի[16] եւ ցեղերի ազնվականների խորհրդի ժամանակ»[17]: Նույնն է պարագան նաեւ Օսմանի մահվանից հետո, երբ հարց բարձրացվեց այն մասին, թե նրա երկու որդուց ո՞վ պետք է դառնա նրա իրավահաջորդը, եւ կրկին հավաքվեց ցեղային վերնախավը (عزيزلر): Այս ժողովում քննարկվում էր Օսմանի ժառանգությունն իր որդիների՝ Ալլաէդդինի եւ Օրհանի միջեւ բաժանելու հարցը: Հենց ցեղային վերնախավը հաստատեց Ալլաէդդինի հրաժարումը բեյի տիտղոսից՝ հօգուտ կրտսեր եղբոր՝ Օրհանի[18]:

Սկզբնական փուլում Օսմանյան էմիրության ներսում ռազմական գործի կազմակերպումը գերագույն ղեկավարի՝ բեյի հիմնական գործառույթն էր. նա առաջին հերթին հենց հրամանատար էր: Այս կիսաբարբարոս զարգացման փուլում օսմանների կողոպտիչ պատերազմները, անկասկած, նրանց հիմնական եւ կարեւորագույն «զբաղմունքն» էին: Թե՛ ռազմական-ցեղային կազմակերպումը, թե՛ ռազմական «զբաղմունքը», իհարկե, ոչ մի դեպքում չի կարելի անվանել թուրքերի «ազգային» առանձնահատկություն (ինչպես դա անում են քեմալական պատմաբանները): Նրանք հայտնվեցին Օսմանյան էմիրության ներսում այդ ժամանակ արդեն ծագած սոցիալական շերտավորման արդյունքում: Օսմանների ռազմական կազմակերպումը, որի նմանը եւս գոյություն ուներ համապատասխան ժամանակահատվածում Եւրոպայի եւ Ասիայի այլ պետություններում, արտացոլում էր ռազմական ավարի, հարկի եւ նոր հողատարածքների զավթմանը ձգտող ցեղային վերնախավի շահերը: Ուչբեյերը եւ «ցեղերի երեւելիները»՝ ահա այն վերնախավը, որն իր ձեռքում կենտրոնացնելով էմիրության հարստությունները, տիրելով հողերին ու անասուններին, իր շահերին համապատասխան՝ որոշում էր օսմանյան ղեկավարների քաղաքականության կազմակերպչական ձեւերը, բնույթն ու ուղղվածությունը: ԺԴ. դ. կեսերից թուրքական նվաճումների նպատակ դարձան ոչ միայն բացահայտ կողոպուտները, այլեւ զուգահեռաբար նաեւ հողերի գրավումը՝

15 Այս փաստը հաստատվեց ԺԵ. դ. ժամանակագրություններում, որտեղ ո՛չ Օսմանը, ո՛չ Օրհանը սուլթան չեն անվանվում, իսկ Մուրադը սուլթան է անվանվում միայն իր կյանքի վերջում :

16 Ուչբեյ՝ իրեն հաստկացրած հողատարածքի (ուջի) սահմաններում արտաքին սահմանի պաշտպանությունն իրականացնող ցեղապետ:

17 ترجمة صحائف الاخبار لمنحم باشى Стамбул, 1285-1868, т. III, с. 277.

18 Տես "Die altosmanische Chronik desAšikpaša-zäde auf Grund mehrerer neuentdeckter Handschriften, von neuem herausgegeben von Friedrich Giese", Leipzig, 1929, էջ 34-35.

պայմանավորված նվաճված ժողովուրդներից հարկերի եւ կոռի տարբեր ձեւերով եկամուտ ստանալու նկրտումով:

Օսմանների ռազմական գործողությունների մասշտաբները մեծանում էին՝ բազմապատկելով բարձրագույն բեյերի եւ ռազմական վերնախավի հարստությունը: Դրա հետ մեկտեղ բավական մեծ թափով սկսեցին զարգանալ երիտասարդ Օսմանյան պետության՝ արդեն ոչ միայն ռազմական կազմակերպման, այլ նաեւ քաղաքական եւ դատավարչական կառավարման բոլոր ձեւերը: Սկզբնական փուլում պետական իշխանության ապարատը ծայրահեղ պարզունակ էր: Օսմանի օրոք որպես նրա մտերիմ աջակիցներ են հանդես գալիս ազգականները՝ որդիները, եղբայրները եւ ուրիշներ: Նրանց նա դարձրեց առաջին էմիրներ. նրանց միջեւ որպես պարգեւներ բաժանեց զենքի ուժով ձեռք բերած ամրոցները[19]: Հասարակական իշխանության իրականացման գործում գլխավոր օգնականն Օսմանի ավագ որդի Ալաէդդինն էր: Վերը մեջբերված թուրքական պատմության տարեգիր ժողովածուի հեղինակ Մյունեջջիմ-բաշին (մահացել է 1702 թ.) հայտնում է. «Թուրքմեներենում ավագ որդուն տրվում է փաշայի անվանում, եւ այդ պատճառով նրան (Ալաէդդինին -Ա. Տ.), որպես եղբայրներից ավագի, փաշա էին կոչում»[20]: Ռազմական գործերում Օսմանի օգնականն էմիրների էմիր (էմիր ուլ-ումերա) տիտղոսն ստացած նրա երկրորդ որդի Օրհանն էր[21]: Ինքը՝ Օսմանը, մինչեւ իր կյանքի վերջ չէր խզում կապերը քոչվոր անասնապահական տնտեսության հետ եւ արշավանքներից ազատ ժամանակ քոչվորության էր մեկնում ամառային արոտավայրեր[22]:

Հետզհետե պետական կառավարման կազմակերպումը բարդանում էր եւ էմիրների ու հրամանատարների մեջ ավելի հաճախ էին հանդիպում Օսմանյան ղեկավարների հետ ազգակցական կապ չունեցող ռազմական եւ ցեղային ֆեոդալիզացվող վերնախավի ներկայացուցիչներ: Փաշայի եւ էմիրների էմիրի տիտղոսները նույնպես սկսեցին շնորհվել ոչ միայն սուլթանների հետ ազգակցական կապերի հատկանիշով, այլ նաեւ սուլթանին մատուցած համապատասխան ծառայությունների համար:

Այս կերպ կազմավորվող Օսմանյան պետության մեջ բոլոր միջոցառումներն իրականացվում էին՝ ելնելով ֆեոդալացվող հողատերերի արագ աճող դասի շահերից. այս դասի բարեկեցության հիմքը դառնում էին մի կողմից հողատիրության ռազմաավատական զարգացող համակարգը, որն իրավունք էր տալիս շահագործել հողագործ բնակչությանը, իսկ մյուս կողմից՝ գերագույն իշխանության օգնությամբ հարեւան ժողովուրդների դեմ նվաճողական

19 Տե՛ս **Орудж Адиль**, էջ 12:
20 **Мюнеджжим-баши**, т. III, с. 278.
21 Տե՛ս անդ:
22 Տե՛ս անդ:

արշավները: Նվաճումների ընդլայնման հետ մեկտեղ օսմանյան հրամանատարներին թույլատրվում էր սեփական հայեցողությամբ նվաճված շրջաններում հողատարածքներ շնորհել աչքի ընկած զինվորներին: Սա նպաստում էր ինչպես հողատերերի դասի քանակական արագ աճին, այնպես եւ նրա տնտեսական հիմքի ընդլայնմանը: Օսմանյան նվաճողների միջեւ ունեցվածքային եւ սոցիալական անհավասարությունը շարունակում էր արագ զարգանալ: Այս անհավասարության հիմքն օսմանյան հասարակության ներսում նյութական բարիքների (առաջին հերթին հողի՝ որպես նյութական բարիքի արտադրման հիմնական միջոցի) անհավասար բաշխումն ու պետականորեն օրինականացված ունեւոր դասի կողմից անմիջական արտադրողների շահագործման իրավունքն էին:

Աղբյուրներից կարելի է հասկանալ, որ գոյություն ուներ թուրքերի կողմից նվաճված հողերի բաշխման երկու ձեւ: Մի կողմից՝ ռազմական վերնախավի ներկայացուցիչները, որպես ավատական պարգեւներ, իրենց վերահսկողության տակ էին վերցնում ամբողջական շրջանները եւ լավագույն հողատարածքները: ԺԵ. դ. թուրք ժամանակագիր Աշըք-փաշա-զադեն (մահ. 1484 թ.), խոսելով «գազիներին» գյուղերի բաշխման մասին, հատուկ նշում էր, որ Օսմանը «յուրաքանչյուրին իր դիրքին համապատասխան հարգանք էր ցուցաբերում»[23]: Այսպես օրինակ՝ Նիկոդեմիայի նվաճումից հետո Օրհանն այդ ողջ տարածաշրջանը տվեց ինչ-որ «քաջի»՝ Քարա Մյուրսել անունով, որպեսզի նա, հողը բաժանելով թիմարների, շնորհի արժանիներին: Ցալաքովան հանձնվեց Աքչա Քոջա անունով մի հրամանատարի եւ իր հետ եկած գազիներին[24]:

Մյուս կողմից՝ տեղի էր ունենում փոքրասիական բնակիչ-քոչվորների զանգվածային գաղթ դեպի նվաճված շրջաններ: Այս ներգաղթյալները բնակության տարածք էին ստանում ինչպես նվաճված ամրոցներում, այնպես եւ այն վայրերում, որտեղ կարելի էր զբաղվել հողագործությամբ եւ անասնապահությամբ: Աշըք-փաշա-զադեի վկայությամբ՝ երբ նվաճված Քարաջահիսարում տներն ամայի մնացին, Գերմիյանից եւ այլ շրջաններից եկածները սկսեցին Օսմանից խնդրել բնակավայր, եւ նա նրանց բաժանեց այդ տները[25]: ԺԵ. դ. տարեգիր Օրուջ Ադիլը հայտնում է, որ Նիկոդեմիայի նվաճումից հետո որոշ շրջաններ փոխանցվեցին Ցախշիլի եւ Աքշաբ ժողովրդին[26]: Երբ Օրհանի որդի Սուլեյմանն անցավ Գալլիպոլիի թերակղզի եւ նվաճեց այնտեղ մի շարք ամրոցներ, առաջին հերթին իր հորից պահանջեց ավելի շատ մուսուլմաններ ուղարկել նվաճված տարածքները բնակեցնելու համար, քանի որ բնակ-

23 **Ашик-паша-заде**, с. 23.
24 Տե՛ս անդ, էջ 39. **Орудж Адиль**, էջ 15:
25 Տե՛ս **Ашик-паша-заде**, էջ 18:
26 Տե՛ս **Орудж Адиль**, էջ 15:

չությունը ոչնչացվել էր կամ դիմել փախուստի: Դրանից առաջ Մարմարի ծովի ափին գտնվող նոր նվաճված շրջան Քարեսիում այդ պահին հայտնվեց արաբների քոչվոր ցեղը, որն անմիջապես իր ողջ ունեցվածքով եւ տներով (այսինքն՝ վրաններով) փոխադրվեց Գալլիպոլիի թերակղզի: Քարեսիի շրջանից բնակիչների վերաբնակեցումը Բալկաններում թուրքական նվաճումների առաջին փուլի ժամանակ մշտական երեւույթ էր[27]: Հետագայում որպես ներգաղթյալ են հայտնվում նաեւ այլ շրջանների բնակիչներ: 1360 թ. Զագորայի եւ Ֆիլիպպուպոլի նվաճումից հետո՝ Սուլթան Մուրադի օրոք բեյերից յուրաքանչյուրը դարձավ ուջի[28] ղեկավար, որի հետ մեկտեղ Սարուհան շրջանից Սերոզի շրջակա տարածքներում վերաբնակեցվեցին քոչվոր յուրյուքները[29]:

Պատմական աղբյուրներում տեղ գտած նմանատիպ բազմաթիվ տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ նվաճումներն ու ձեռքբերումներն առաջին հերթին բաշխվում էին ռազմական վերնախավի ներկայացուցիչների միջեւ, որոնք այսպիսով (բացի ուղղակի ռազմական ավարից) ստանում էին հետագա հարստացման կարեւորագույն աղբյուր՝ ի դեմս շնորհված հողատարածքների: Թե՛ օսմանյան կառավարիչների գանձարանում, թե՛ առանձին հրամանատարների ձեռքում կարճ ժամանակահատվածում կուտակված հեքիաթային հարստությունները զարմացնում էին ժամանակակիցներին[30]:

Հայտնի է, որ առաջին օսմանական կառավարիչների եւ վերնախավի հարստությունները նվաճվել էին կարճ ժամանակահատվածում: Օսմանը, ինչպես հայտնում են աղբյուրները, շատ համեստ ունեցվածքի տեր, հասարակ քոչվոր բեյ էր: Մի քանի ձի, երկու-երեք նախիր ոչխար, թուր եւ լանջապանակ՝ ահա իր մահվանից հետո մնացած ողջ ժառանգությունը[31]: Լինում էին ժամանակներ, երբ արշավներ իրականացնելու համար ուժը եւ միջոցները չէին բավարարում, ինչպիսի հնարքների ասես չէին դիմում օսմանյան առաջին հրամանատարները: Այսպես օրինակ՝ Օրհանը թույլատրեց Նիկոդեմիայի արխոնտին վաճառել գերի վերցրած բյուզանդացի արխոնտին, որպեսզի ձեռք բերված գումարով նախապատրաստի նույն այդ ամրոցի պաշարումը[32]:

Միայն ժամանակի ընթացքում եւ հատկապես սուլթան Մուրադի օրոք արքունական գանձարանի եկամուտներն այնքան աճեցին, որ հնարավոր դարձավ պահել վարձատրվող բանակ, կառուցել պալատներ եւ մզկիթներ, զարմացնել հարեւան երկրների պատվիրակներին հարուստ տոնախմբություններով: Մուրադ Ա.-ի ժամանակներից սկսած՝ պաշտոնապես օրինակա-

27 Տե՛ս **Ашик-паша-заде**, էջ 46:

28 Տե՛ս **Орудж Адиль**, էջ 21. **Ашик-паша-заде**, էջ 56:

29 Տե՛ս **Орудж Адиль**, էջ 24. Об этом же сообщается в анонимной хронике XV в. См. рукопись ИВ, т. 149, л. 14-б:

30 Տե՛ս قوجه حسين تواريخ آل عثمان Рукопись ИВ, С. 564, л. 114-а:

31 Տե՛ս անդ, л. 36-б:

32 Տե՛ս անդ, л. 41-а:

նացվեց ողջ ռազմական ավարի հինգերորդ մասի պահումը. սա վերաբերում էր նաեւ գերիներին: Այսպիսով՝ նվաճված ժողովուրդներից հավաքվող տուրքերը եւ ռազմական ավարը պետական գանձարանի եկամուտների կարեւորագույն աղբյուր դարձան: Բալկաններում եւ Փոքր Ասիայում նվաճված շրջանների գյուղական եւ քաղաքային բնակչության աշխատանքը վերածվեց ֆեոդալականացվող ռազմական վերնախավի, ցեղային բեյերի եւ հոգեւորականության գոյության ու հարստացման աղբյուրի:

Այն ժամանակ, երբ մի բեւեռում, այսինքն՝ ազնվական վերնախավի ձեռքում ռազմական ուժի եւ պետական իշխանության օգնությամբ տեղի էր ունենում նյութական արժեքների, քաղաքական իրավունքների եւ արտոնությունների կենտրոնացում, մյուս բեւեռում, այսինքն՝ թուրքական եւ ոչ թուրքական քաղաքային եւ գյուղական բնակչության մոտ, համապատասխանաբար, աճում էր պարտականությունների եւ տուրքերի քանակը, իսկ քաղաքական առումով նրանք ավելի ու ավելի իրավազուրկ էին դառնում:

Գյուղական բնակչության տնտեսական դրությունը որոշվում էր նրանով, որ նվաճված հողատարածքների՝ ռազմաավատական սեփականության վերածվելու հետեւանքով վերջիններս սկսեցին ներառվել ռայաների ցուցակներում եւ պարտավորվում էին հող մշակել ու որոշակի հարկ վճարել ավատատեր-հողատիրոջը կամ ուղղակիորեն պետությանը: Գյուղական բնակչության տուրքերի իրավական ձեւակերպումը գտնում ենք ավելի ուշ՝ միայն Մեհմեդ Բ.-ի (1451-1481) Օրենքների ժողովածուում, սակայն Մեհմեդ Բ.-ի օրոք, անկասկած, ամրակայված էին տնտեսական հարաբերությունների ձեւերը, որոնք փաստորեն զարգացել էին նախորդ շրջանում: Նվաճողների ազնվական վերնախավի եւ նվաճված ոչ թուրք բնակչության միջեւ տնտեսական հարաբերությունների զարգացման ընդհանուր ընթացքը բնորոշվում է տուրքի՝ հողի, եկամտի եւ անձնական հարկերի տարբեր տեսակների աստիճանական զարգացմամբ՝ «խարաջ» եւ «ջիզիյե» ընդհանուր անվամբ (այս հարկերը տվյալ տարածքում գոյություն ունեին նաեւ նախկինում): Սա նաեւ հանգեցնում էր նվաճող հողատիրոջ եւ հպատակ հողատիրոջ՝ որպես ֆեոդալի եւ կախյալ աշխատավորի հարաբերությունների աստիճանական ձեւավորմանը: Սակայն այս գործընթացը զարգանում էր աստիճանաբար՝ ֆեոդալական հասարակության տնտեսական եւ քաղաքական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններին համապատասխան: Թուրքական պատմական աղբյուրների տվյալները ցույց են տալիս, որ նվաճված ժողովուրդներից սոցիալ-տնտեսական զարգացման ավելի ցածր մակարդակում գտնվող թուրք նվաճողները միայն աստիճանաբար ինքնուրույն զարգանալով էին հաղորդակից դառնում իրենց համար նոր հասարակական հարաբերություններին:

Նախնական փուլում խարաջը՝ տուրքը, ամենուր հանդես է գալիս ուղղակի ռազմական ավարից հետո, ինչն օսմանյան հրոսակախմբերի զավթիչ

արշավանքների գլխավոր խթանն էր: Սերբական, բուլղարական, բյուզանդական, հունգարական եւ այլ շրջանները, մինչեւ բռնի ընդգրկումը Օսմանյան պետության կազմում, զենքի ուժով պարտադրված էին տուրք վճարել: Այս շրջաններից տուրք հավաքելով՝ օսմանյան զավթիչները դեռ չմիջնորդավորված հարաբերությունների մեջ չէին մտնում հարկատու բնակչության հետ: Տուրքը հավաքվում էր տվյալ երկրի կառավարչի կողմից՝ գոյություն ունեցող տեղական կառավարման համակարգի օգնությամբ, որն այդ փուլում որեւէ փոփոխության չէր ենթարկվում: Թուրք սուլթանին տուրք վճարելու անհրաժեշտությունն անխուսափելիորեն հանգեցնում էր նվաճված երկրների ժողովուրդների հարկային բեռի էական ավելացմանը: Տեղական ֆեոդալների իշխող դասը եւ պետական կառավարման ողջ համակարգը շարունակում էին ապրել նույն հասարակ ժողովրդի հաշվին. երկրից գանձվող խարաջի պատճառով բնակչության ուսերին կրկնակի բեռ էր ընկնում:

Քանի որ նվաճված հողերը բռնի կերպով ընդգրկվում էին Օսմանյան պետության կազմում եւ իբրեւ ռազմաավատական պարգեւ՝ թիմար, բաշխվում էին թուրքական վերնախավի միջեւ, հարկատու բնակչությունը կախյալ դիրք էր ձեռք բերում նոր հողատերերից՝ թուրք ռազմաֆեոդալ վերնախավից: Այդ պահից սկսած նվաճված բնակչությունը վերածվում է իրավազուրկ ռայայի, որը պետք է խարաջ եւ ջիզիյե անվան տակ հսկայական չափերի հարկեր վճարեր արդեն ուղղակիորեն իր նոր տերերին՝ թուրք թիմարատերերին եւ փաշաներին կամ՝ սուլթանական գանձարան:

Նվաճված որոշ շրջանների գյուղացիների վրա պարտավորություն էր դրվում որեւէ առավել արժեքավոր գյուղատնտեսական մթերքի որոշակի տեսակ մատակարարել սուլթանական պալատին: Այսպես օրինակ՝ 1364 թ. Ֆիլիպպոլի գրավումից հետո այս շրջանի գյուղացիներին պարտավորեցրել էին բացի այլ կուլտուրաներից մշակել նաեւ բրինձ: Եթե հավատանք թուրքական աղբյուրների տեղեկություններին, ապա գանձարանի համար այստեղ տարեկան աճեցվում էր 4 մլն աքչե[33] գումարի բրինձ («kırk kerre yüz bin akçe»)[34]:

Ճիշտ այդպես էլ քաղաքային արհեստավոր բնակչությանը պարտադրվում էր տարատեսակ ծանր աշխատանքներ իրականացնել հօգուտ նվաճողների: Տեղեկանում ենք, որ Նիկեայի մոտ գտնվող ամրոցներից մեկի բնակչությունը, որ զբաղվում էր այծի մազից ապրանքների մշակմամբ, թուրքական նվաճումից հետո պարտավորվեց պատրաստել միայն ծածկոցներ «գազիների» ձիերի համար[35]:

Բազմաթիվ եւ տարաբնույթ էին Օսմանյան պետության՝ թուրքական

33 Աքչե - մանր արծաթե դրամ, որի արժեքը նախապես կազմում էր 1/3-1/4 դիրհեմ: Դիրհեմ (դրահմա) քաշով հավասար է 3 գ 78 մգ: Ժամանակի ընթացքում աքչեի արժեքը փոփոխվում էր:

34 Տե՛ս **Коджа Хюсеин,** Указ. рукопись, տ. 63-6:

35 Տե՛ս անդ, տ. 47-a:

ասպատակությունների ժամանակ կյանքը պահպանած եւ գերությունից խուսափած քրիստոնյա հպատակների հարկերը: Սարսափելի ահաբեկված՝ նրանք պետք է վերածվեին իրավագուրկների սեփական հողում եւ ծառայեին իրենց ստրկացնողներին: Բացի այս ամենից՝ նվաճվածների վրա ծանր բեռ էր յուրաքանչյուր 3-5 տարին մեկ սուլթանական հարկահավաքներին 7-15 տարեկան իրենց լավագույն որդիներին տալու պարտավորությունը[36]: Այս պարտավորությունը, որը ներմուծվել էր Մուրադ Ա.-ի կողմից Ադրիանապոլի գրավումից հետո, նվաճված երկրների քրիստոնյա բնակչության համար իրական անեծք էր: Ոչ սակավաթիվ սերբեր, մակեդոնացիներ, բոսնիացիներ, բուլղարներ եւ այլք, փրկելով իրենց եւ իրենց երեխաների կյանքը, կրոնափոխ էին լինում՝ ընդունելով իրենց համար ատելի զավթիչների կրոնը: Թուրքական նվաճումը բացեց բալկանյան ժողովուրդների պատմության ամենախավար էջը:

Այսպիսով, հենց թուրքական աղբյուրներից բերված տվյալները հստակ ցույց են տալիս, որ Օսմանյան պետությունն իր զարգացման նախնական փուլում կիսաբարբարոս «թալանչի»[37] պետություն էր՝ սոցիալ-տնտեսական ծայրաստիճան ցածր զարգացման մակարդակով, ֆեոդալականացվող հասարակական հարաբերություններով: Ցեղային եւ ռազմական վերնախավը, որի շահերից ելնելով՝ Օսմանյան պետությունը բազմաթիվ կողոպտիչ արշավանքներ էր իրականացնում, նվաճված տարածքներում հարմարվում էր այնտեղ հաստատված հասարակական հարաբերությունների զարգացած ձեւերին եւ այդպիսով օգտագործում էր այս երկրներում աշխատավորների ֆեոդալական շահագործման վաղուց կազմավորված ձեւերն ու մեթոդները: Բնականաբար, այդ ընթացքում ֆեոդալական զարգացման ակտիվ գործընթաց էր տեղի ունենում նաեւ օսմանյան հասարակության ներսում, ինչը հստակ նկատելի է թուրքական պատմական աղբյուրների տվյալներում:

Անկասկած, այս բոլոր փաստերը հայտնի են նաեւ Թուրքիայի միջնադարյան պատմության քեմալական կեղծարարներին, սակայն ելնելով իրենց քաղաքական հետադիմական նպատակներից՝ նրանք, ինչպես տեսանք, խեղաթյուրում են իրականությունը՝ հրաժարվելով այն ամենից, ինչը չի համապատասխանում թուրք «ազգի»՝ այլ ազգերի հանդեպ երեւակայական գերազանցության նրանց բուրժուա-ազգայնական հայեցակարգին:

1360-1396 թթ. ընկած ժամանակահատվածում օսմանյան բանակը, քայլ առ քայլ շարժվելով սկզբում դեպի Սերբիայի, այնուհետեւ Բուլղարիայի ներքին շրջաններ, ամայացնելով քաղաքներն ու բնակավայրերը, ոչնչացնելով, ահաբեկելով եւ գերեվարելով բնակչությանը, ամեն արշավանքից հետո արտահանելով ավելի մեծ քանակությամբ ռազմական ավար, իրար հետեւից

36 Տե՛ս **H. Uzunçarşılı,** Osmanlı Devleti teşkilâtından Kapıkulu ocakları, Ankara, 1943. c I, էջ 14:

37 Տե՛ս **Կ. Մարքս,** Хронологические выписки. Архив К. Маркса и Ф. Энгельса, т. V, էջ 223:

տիրացավ Ադրիանապոլին, Դիմոտիկային, Զագորային, Գյումյուլջինին, Վարդարին, Ֆիլիպպոպոլին, Վիզային, Քեստենդիլին, Սոֆիային եւ շատ այլ քաղաքների: Բալկանների բնակչությունը համառ դիմադրություն էր ցույց տալիս թուրքերին եւ հաճախ ոչնչացնելով այն ամենը, ինչը կարող էր օգտակար լինել թշնամուն, հեռանում էր անառիկ լեռներ[38]: Սակայն տեղական ֆեոդալ ազնվականության որոշ մասի՝ թուրքական սուլթանի մոտ ծառայության անցնելը եւ, հետեւաբար, զավթիչներին կազմակերպված հակահարված տալիս միասնության կատարյալ բացակայությունը, ներքին տարաձայնություններն ու անմիաբանությունը Բալկանյան թերակղզու ժողովուրդների ճակատագրի համար ունեցան տխուր հետեւանքներ:

Բալկանյան թերակղզում անթիվ արժեքավոր իրերի եւ գերիների՝ ստրուկների, ոսկու եւ արծաթի հանքերի, անասունների, հացահատիկի ու գարու[39], վերջապես հողագործ բնակչությամբ լայնածավալ հողատարածքների գրավումն ու ձեռքբերումը դարձան Օսմանյան պետության օրեցօր աճող ռազմական հզորության աղբյուր:

Նվաճված ժողովուրդներին ենթարկելու համար թուրք սուլթաններին անհրաժեշտ էր իրենց կողմը գրավել այդ շրջանների գերիշխող ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչներին: Սուլթանները պետք է օգտագործեին տեղական լեզուների եւ սովորույթների՝ նրանց գիտելիքները: Սովորաբար թուրք սուլթանների մոտ ծառայության անցնելը, որը ուղեկցվում էր իսլամի ընդունմամբ, թույլ էր տալիս քրիստոնյա ֆեոդալ վերնախավին պատկանող ուրացողներին արտոնյալ դիրք գրավել նաեւ նոր տիրակալների օրոք: Թուրք սուլթաններին ծառայող նմանատիպ ուրացողներ բավականին վաղ են հայտնվում: Այսպես օրինակ՝ արդեն Օսմանի օրոք, որպես նրա մտերիմ համախոհ, տեսնում ենք Միխալ-բեյին: Մյունեդջիմ-բաշին գրում է. «Սուլթանի եւ Քյոսե Միխալի միջեւ այնպես էին ամրացել վստահությունն ու ընկերությունը, որ նրանք բոլոր գործերով միմյանց հետ էին խորհրդակցում, եւ սուլթանը նրան կարեւոր հանձնարարություններ էր տալիս»[40]: Բյուզանդիայի, իսկ այնուհետեւ Բալկանյան պետությունների ֆեոդալ վերնախավի մի մասի անցումը թուրքական սուլթանի կողմը, անկասկած, նույնպես նպաստում էր Թուրքական պետության առավել արագ զարգացմանը եւ նվաճված ժողովուրդների հանդեպ թուրքական գերիշխանության ամրապնդմանը: Թուրքերի կողմից Գալլիպոլիի նվաճման եւ դեպի Բալկանյան թերակղզու խորքերն իրականացված առաջին արշավանքների ժամանակ սուլթան Մուրադի մտերիմ համախոհներից ենք տեսնում ինչ-որ Էվրենոս-բեյի, որը նույն-

38 Տե՛ս **Коджа Хюсеин**, տ. 69-а:
39 Տե՛ս **Коджа Хюсеин**, տ. 66-б-69-а:
40 **Мюнеджжим-баши.** т III, с. 276.

պես ոչ թուրքական միջավայրից էր[41]: Ժամանակի ընթացքում թուրքական սուլթանի մոտ ծառայության անցնող տեղացի ֆեոդալների թիվն զգալիորեն աճեց: Նրանց մեջ հանդիպում ենք այնպիսի ազդեցիկ անձանց, ինչպիսին է սերբական իշխան Լազարի որդի Ստեֆանը եւ այլք[42]:

Թուրք տարեգիրները, որոնք, լինելով վերնախավի ներկայացուցիչներ, որպես կանոն չափազանց իդեալականացնում էին օսմանյան սուլթաններին, ինչը բազում բուրժուա հետազոտողների հիմք տվեց ստեղծելու նվաճվածների հանդեպ թուրք-զավթիչների «արդար» վերաբերմունքի, նրանց «մեծահոգության», «կրոնական հանդուրժողականության» եւ այլնի մասին լեգենդը: Իսկ ժամանակակից քեմալական պատմաբանները, ուռճացնելով թուրքական նվաճումների հենց այս կողմը, օրինակ՝ «Թարիհ» պաշտոնական պատմության մեջ գրում են, որ օսմանյան կառավարման համակարգն իբր թե ապահովում էր յուրաքանչյուր հպատակի պատվի, ունեցվածքի եւ անձի պաշտպանությունը[43]: Քեմալական պատմաբանները պնդում են, որ թուրքերն «ազատագրել» են բալկանյան ժողովուրդներին «ֆեոդալիզմից», որ նրանք իբր ներմուծել են պետական կյանքի կառավարման նոր, ավելի բարձր ձեւեր եւ այլն[44]: Նմանատիպ պնդումներ անելով՝ թուրք ազգայնականները չեն ամաչում պատմական փաստերի խեղաթյուրումից, երբ այս փաստերը վկայում են իրենց կեղծ տեսությունների դեմ: Նրանք հնարավոր են համարում թուրք զավթիչների կողմից բալկանյան ժողովուրդների «ազատագրման» մասին հայտարարելն այն դեպքում, երբ թուրքական պատմական աղբյուրներում հաղորդվում է սարսափելի եւ անսահման կտտանքների մասին, որոնց ենթարկվում էին նվաճված շրջանների բնակիչները:

«Երբ նվաճվեց Քարաջահիսարը, - կարդում ենք տարեգրության մեջ, - պարտված իշխանն իր ողջ ընտանիքով եւ ունեցվածքով գերի էր վերցվել: Թեքֆուրը (այսինքն՝ արխոնտը - Ա. Տ.) մուսուլմանների այսպիսի փառահեղ հաղթանակի կապակցությամբ սուլթանի մոտ ծառայության անցավ, իսկ մնացյալ ունեցվածքը բաժանվեց հաղթողների միջեւ: Անհավատների տները տրվեցին գազիներին: Անօգնական անհավատ ռայան խարաջի տակ դրվեց»[45]:

Մեկ այլ տեղում պատմվում է այն մասին, որ երբ սուլթան Մուրադ Ա.-ի նշանավոր հրամանատարներից մեկը՝ Լալա Շահին փաշան, Ադրիանապոլի նվաճումից հետո շարունակեց հետագա հարձակումը, Իհթիման եւ Սմակով ամրոցների ճանապարհին, երկու սարի միջեւ գտնվող խորը կիրճում «քյա-

41 Տե՛ս **Орудж Адиль**, էջ 20:

42 Տե՛ս անդ, էջ 34:

43 Տե՛ս "Tarih", т. III, էջ 3-4:

44 Տե՛ս օրինակ՝ **Ömer Lütfi Barkan**, Osmanlı imparatorluğunda çiftçi sınıfların hukukî statüsü. Ülkü, c IX, թ. 49, էջ 48, թ. 53, էջ 336:

45 **Коджа Хюсеин**, л. 22-6. **Мюнеджжим-баши**, т. III, с. 274.

ֆիրները» զենքով պահ էին մտել եւ համառ դիմադրություն ցուցաբերել: Իսկ երբ թուրքերը կատաղի պայքարի արդյունքում ոչնչացրեցին քաջ հայրենասերներին եւ անդունդը նետեցին, ամրոցներն էլ նվաճեցին, ռայան պարտավորվեց խարաջ վճարել[46]:

Ինչպե՞ս կարելի է այլ կերպ անվանել աղբյուրների նմանատիպ վկայությունների անտեսումը քեմալական կեղծ գիտնականների կողմից, եթե ոչ պատմության միտումնավոր խեղաթյուրում: Չէ՞ որ այսպիսի վկայությունները մեծաքանակ են:

Այն դեպքում, երբ քեմալական պատմաբանները թուրք սուլթան-նվաճողներին վերագրում են «լուսավորյալ եւ արդար» կատարյալ միապետների գծեր, աղբյուրները նրանց նկարագրում են որպես կիսաբարբարոսներ, որոնք նոր էին հարմարվում ավելի զարգացած ժողովուրդների նկատմամբ գերիշխանության պայմաններին: Օրինակ՝ առավել վաղ օսմանյան տարեգիրներց մեկը՝ Աշըք-փաշա-զադեն, հայտնում է Օսմանի օրոք տեղի ունեցած հետեւյալ բավականին ուշագրավ դեպքի մասին. «Օսմանի մոտ Գերմիյանից մի մարդ է գալիս եւ ասում.

- Վաճառի՛ր ինձ այս շուկայի տուրքը (բաջ):

Օսմանը հարցնում է.

- Իսկ բաջն ի՞նչ է:

Նա պատասխանում է.

- Յուրաքանչյուրից, ով կգա այս շուկա, ես վճար կվերցնեմ:

- Մի՞թե այդ շուկայի վաճառականները քեզ պարտք են, որ դու նրանցից փող վերցնես, - զարմանում է Օսմանը:

- Իմ խան, - պատասխանում է այդ մարդը, - այդպիսին է սովորույթը: Ամենուր փադիշահներն այդպես են պահանջում:

- Դա Աստծո՞ թույլտվությամբ է, թե՞ բեյերն իրենք այդպես արեցին, - հարցնում է Օսման գազին:

- Այդպիսին է սովորույթը, իմ խան, այն վաղուց ի վեր գոյություն ունի, - պատասխանեց այդ մարդը:

Այդ ժամանակ Օսմանը սաստիկ բարկացավ.

- Հեյ, դո՛ւ, դուրս կորիր: Ինչ գործ ունեմ ես իր օգուտը փնտրող մարդու ունեցվածքի հետ, որպեսզի ես նրանից գումա՞ր գանձեմ: Գնա եւ չփորձես ինձ ասել այդ մասին, այլապես կպատժվես:

Այդ ժամանակ խոսակցությանը խառնվեցին նրա մարդիկ (քադիներն ու սուբաշիները), որոնք ասացին.

- Մեր տե՛ր, այդպիսին է բեյերի սովորույթը շուկայի նկատմամբ: Յուրաքանչյուրը նրանց ինչ-որ բան է տալիս:

- Դե եթե այդպես եք ասում, - ավարտեց սուլթանը, - թող այսուհետ այս-

46 Տե՛ս անդ, տ. 62-ճ:

պես լինի. շուկա պարկ բերած եւ այն վաճառած յուրաքանչյուր մարդ, թող վճարի երկու աքչե, իսկ եթե չվաճառի, թող ոչինչ չվճարի»[47]:

Տարեգրի կողմից բերված փաստը խոսում է այն մասին, որ առաջին օսմանյան ղեկավարները, առերեսվելով զարգացման ավելի բարձր մակարդակի վրա գտնվող ժողովուրդներին, սկսում էին աստիճանաբար ընկալել հասարակական հարաբերությունների այնպիսի ձեւեր, որոնք մինչ այդ թուրքերին անհայտ էին: Բայց նմանատիպ փաստերը քեմալական պատմաբաններին «ձեռնտու չեն»: Այս պատմաբանները Աշըք-փաշա-զադեի ստեղծագործությունից մեջբերված հատվածը «մեկնաբանում են» այնպես, ասես Օսմանը, բարկանալով, վռնդում է Գերմիյանից եկածին. նրանք ձգտում են ընթերցողին ստիպել մտածելու, որ շուկայական տուրքի գանձման առաջարկը Օսմանի կողմից զայրույթով մերժվեց եւ որ, հետեւաբար, օսմանյան տիրակալներին խորթ էր որեւէ նյութական շահ: Քեմալական պատմաբանների հակագիտական նմանատիպ հնարքները մատնում են նրանց՝ որպես պատմության ամենաանամոթ կեղծարարների:

Ահա պատմական փաստերի կեղծման եւս մեկ օրինակ:

Թուրքական միջնադարի մեր կողմից արդեն հիշատակված մոլի կեղծարար Օմեր Լյութֆի Բարքանն իր՝ 1945 թ. հրապարակած միջնադարյան Թուրքիայի տնտեսական պատմության հարցերի վերաբերյալ փաստաթղթերի լայնածավալ ժողովածուի նախաբանում փորձում է պատկերել օսմանների պետական վարչական համակարգը որպես իդեալական, միակ եւ անկրկնելի, ընդ որում, մեջբերելով մի փաստաթուղթ, որի համաձայն՝ նվաճողներն ստիպված էին հարմարվել նվաճված ժողովուրդների կյանքի պայմաններին եւ ընկալել նրանց առավել զարգացած հասարակական հարաբերությունների ձեւերը: Բարքանը, առանց որեւէ շփոթության, անում է եզրակացություն, որն ուղղակիորեն հակասում է այդ փաստաթղթի օբյեկտիվ վերլուծությունից բխող տեղեկությանը. նա հայտարարում է, որ Թուրքիայում գերիշխում էին միայն ինքնատիպ եւ ավանդական (իբր իլհաններից եկող) տնտեսական եւ սոցիալական ինստիտուտներ, որոնք ոչ մի պարագայում չէին փոփոխվում[48]:

Քեմալական գրչակների՝ պատմության այդպիսի անամոթ կեղծումների բազում օրինակներ կարելի է բերել: Կարծում ենք՝ ասվածն էլ բավարար է քեմալականների անպատշաճ մեքենայությունները բացահայտելու համար:

Քեմալական պատմաբանները պնդում են, թե թուրք սուլթաններն իբր ստեղծել են բացարձակ միապետության «նմուշ», որին եւրոպական երկրները հասան միայն ԺԸ. դ.:

Նախ միանգամայն ակնհայտ է, որ թուրքերը «օրինակելի» ոչինչ ստեղծել չէին կարող, քանզի իրենց հասարակական զարգացման մակարդակը ցածր էր

47 **Ашик-паша-заде**, с. 19-20.
48 Տե՛ս անդ, էջ LXIX-LXXII:

նվաճված ժողովուրդների զարգացման մակարդակից: Ըստ երեւույթին, «բացարձակ միապետություն» տերմինն օգտագործող քեմալական կեղծ գիտնականները նկատի ունեն սուլթանի բռնապետական իշխանության այն գծերը, որոնք վերջնականապես ձեւավորվում են միայն ԺԵ. դ. կեսերին: Նրանք չեն հասկանում կամ չեն ցանկանում հասկանալ, որ բացարձակ միապետությունը պատմական կատեգորիա է, որի ծագումը վերաբերում է ֆեոդալական հասարակության կազմալուծման եւ նրա ընդերքում արտադրության կապիտալիստական միջոցի ծագման ժամանակաշրջանին: Քեմալական պատմաբանները միտումնավոր քողարկում են բացարձակության դասակարգային բնույթը եւ նրա ծագման սոցիալ-տնտեսական պատճառները: Բացարձակ միապետությունների ծագման շրջանում խոշոր ֆեոդալների նկատմամբ թագավորական իշխանության հաղթանակը կարող էր տեղի ունենալ միայն կենտրոնական իշխանության օժանդակությամբ՝ սաղմնավորվող բուրժուազիայի կողմից[49]: Սակայն մինչեւ ԺԸ. վերջ ֆեոդալական Թուրքիայում բուրժուազիայի ի հայտ գալու մասին խոսք անգամ լինել չի կարող, նույնպես եւ, որ վաղ շրջանի Օսմանյան պետության համակարգը կարող էր «օրինակ» ծառայել ԺԶ.-ԺԸ. դդ. եւրոպական բացարձակ միապետությունների համար:

Թուրք սուլթանների բռնապետական իշխանության սոցիալական բնույթը լիովին տարբերվում էր ուշ շրջանի արեւմտաեւրոպական բացարձակ միապետության ընկերային բնույթից: Այս բռնապետական իշխանությունը հիմնվում էր պետության տիրակալի եւ նրա հաստատուն իշխանության կարիքն ունեցող ռազմաավատատերերի փոխադարձ «աջակցության» վրա: Վերջիններիս դասը ստվարացրին սուլթանի ռազմական նախկին համախոհները: Սուլթանի բռնապետական իշխանության ամրությունը եւ նրա հանդեպ աշխարհազորի հնազանդությունն ուղղակի կախված էին այն հանգամանքից, թե որքանով էին հաջողվում ռազմական արշավանքները, որոնք ոչ միայն բերում էին հարուստ ռազմական ավար եւ գերիներ, որոնց հետագայում ստրկացնում էին, այլ նաեւ նպաստում էին զինվորական դասի՝ սիփահիների հողատարածքների ընդլայնմանը, շահագործվող հողագործ բնակչության ավելացմանը: Թուրք սուլթանների նվաճողական քաղաքականությունը թելադրվում էր այս զինվորական վերնախավի զավթողական շահերով, որն իր հերթին սեփական ժողովրդի վրա իր ունեցած իշխանությունն ամրապնդելու համար միջոցների կարիք ուներ: Այսպիսի խնդիրներ էր լուծում Թուրքական պետության ռազմական ողջ համակարգը, որն ընդգրկում էր ավատատերերի կողմից շահագործվող հենց թուրք բնակչության բավական լայն շերտ:

Այս ռազմաբռնապետական մեքենայի կերակրման նպատակով նվաճված ժողովուրդների վայրենի կողոպուտը թուրքական լծի տակ ընկած երկրներին մատնեց հասարակական-տնտեսական բազմադարյա հետամնացութ-

49 Տե՛ս **К. Маркс и Ф. Энгельс,** Соч., т. XVI, ч. 1, էջ 445-449:

յան: Այս կապակցությամբ անհրաժեշտ է մի քանի բառ ասել թուրքական նվաճումների այսպես կոչված «մարդասիրական» բնույթի մասին, որն այդքան գովերգում են քեմալական պատմաբանները:

Հենց նույն այդ քեմալական պաշտոնական պատմագիտությունից տեղեկանում ենք, որ «թուրքերն իրականացնում էին ազգային հողերի պահպանման քաղաքականություն: Բալկանների քրիստոնյա հողագործները թուրքերի ղեկավարմամբ հասան առավել երջանիկ կյանքի, քան բազիլեւսների եւ թագավորների օրոք: Թուրքերը, չունենալով ոչ մի կաթիլ մոլեռանդություն եւ քաջատեղյակ լինելով կառավարման բավական կատարյալ ձեւերին, չվնասեցին գյուղական հողերը, նույնիսկ ընդլայնեցին դրանք: Նրանք չքանդեցին քրիստոնյա հպատակների գյուղական համակարգը եւ պահպանեցին նրանց հասարակական ու կրոնական հաստատությունները»: Այսպես են գրում բուրժուա նորագույն պատմաբանները:

Սակայն թուրքական նվաճումների պատկերը լիովին այլ է աղբյուրներում:

Բյուզանդական, հայկական եւ այլ պատմիչներ իրենց երկերում ներկայացնում են սարսափելի աղետներ, որոնք իր հետ բերում էր թյուրքական նվաճողների Փոքր Ասիա ներխուժումը: Հիմնվելով հենց այս աղբյուրների վրա՝ Ֆ. Ի Ուսպենսկին գրում էր. «Ինչպես նախկինում սարակինոսների հարձակումները Տավրոսի ետեւից, այնպես եւ այժմ մինչեւ Կապադովկիա, Պոնտոս եւ Ֆրիգիա տարածվող թուրքմենական (այսինքն՝ օղուզական - Ա. Տ.) արշավանքներն այս շրջանների աշխատավոր հողագործ բնակչությանը հասցնում էին անդառնալի վնաս, հեռացնում էին մշակութային բնակչությանը եւ նրանց զբաղեցրած հողերը վերածում արոտավայրերի»[50]:

Նույնիսկ թուրքական պատմական այն աղբյուրներում, որոնց հեղինակները ծայրաստիճան իդեալականացնում են Թուրքիայի տիրակալների գործողությունները, թուրք նվաճողների կողմից ոչ թուրքական բնակչությամբ քաղաքների եւ շրջանների զավթումն ամենեւին էլ այդքան խաղաղ գույներով չի նկարագրվում, ինչպես դա փորձում են ներկայացնել պատմության թուրք կեղծարարները: Այսպես օրինակ՝ Փոքր Ասիայի արեւմտյան մասի քաղաքների եւ ամրոցների ճնշող մեծամասնությունը (Ինեգյոլ, Քարաջահիսար, Բիլեջիք, Աքիհսար, Էվրենոս եւ այլն) դեռ Օսմանի օրոք թալանվել եւ ավերվել էին (غارت و تامرين)[51], բնակչությունը կամ անխտիր ոչնչացվել էր, ինչպես Քարաջահիսարում[52], կամ գերի էր տարվել, կամ էլ փրկվել՝ փախչելով լեռները, ինչպես տեղի ունեցավ Գեյվե ամրոցի դեպքում[53]: Նիկոմիդիայում (Իզնիկ-

50 **Ф. И. Успенский,** Движение народов из Центральной Азии в Европу. ВВ, т. I, М., 1947, с. 18.

51 Տես **Мюнеджжим-баши**, т. III, էջ 274-285:

52 Տես անդ, էջ 274:

53 Տես անդ, էջ 281:

միդ) պատերազմելու ընդունակ բոլոր տղամարդիկ ոչնչացվեցին, իսկ քաղաքի մնացյալ բնակչությունը գերեվարվեց[54]: Պաշարված Նիկեան (Իզնիկ) գրավվել է սովամահության արդյունքում՝ ստիպված լինելով հանձնվել հաղթողների ողորմությանը: Քաղաքի գեղեցկությամբ հիացած Օրհանն արգելում է այն թալանել: Սակայն, ինչպես տեղեկանում ենք, քաղաքի բնակիչների դրությունն ամբողջովին թալանի ենթարկված քաղաքների բնակչությունից, այնուհանդերձ, որեւէ կերպ չտարբերվեց: Ահա թե ինչ է հայտնի դառնում պատմական աղբյուրներից մեկից. մի օր սուլթան Օրհանը շրջում է եւ դիտում նոր նվաճված Նիկեան: Նրան աղաղակներով դիմում են մի խումբ կանայք: «Մեզնից շատերը, - բղավում էին նրանք, - ընկան քո զինվորների թրերից, եւ քանի քանիսին տարան սովն ու ժանտախտը: Կարիքից եւ դժբախտություններից մեր կյանքն անտանելի է դարձել»: Այդժամ սուլթանը հրամայում է իր քաղիներին եւ սիփահիներին. «Թող նրանք, որոնք կարիք ունեն, իրենց կին առնեն այս կանանցից»: Եւ ամուսնացողներին նա ապահովում էր տնով եւ ապրուստի միջոց էր նշանակում[55]: Նիկեայի հարակից հողատարածքները, որպես պարգեւներ, բաժանվեցին նվաճողներին: Քաղաքի արհեստավորները, որոնք հայտնի էին այծի մազից պատրաստած իրենց ապրանքներով, այսուհետ պարտավորվեցին գազիների ձիերի համար ծածկոցներ պատրաստել[56]:

Մի՞թե սա նվաճված բնակչության սարսափելի ճակատագրի վառ պատկեր չէ, որը վրա է հասնում անկախ այն բանից՝ նրանք դիմադրություն ցուցաբերել են զավթիչներին, թե հանձնվել են հաղթողների ողորմածությանը: Ամեն պարագայում նրանց սպասում էր տերերի համար աշխատող ստրուկի ճակատագիր, կամ ենթարկվում էին անխնա ոչնչացման:

Հայտնի է, որ սուլթանը եւ նրան շրջապատող վերնախավն իրենց զավթած շրջանների բնակչությանը դիտում էին բացառապես որպես ստրուկների: Սուլթան Օրհանի օրոք պարզվեց, որ ոչ քոչվորներից բաղկացած հեծելազորը (աքընջը), ոչ էլ ստեղծված կիսականոնավոր զորքը (յայա) սուլթանական իշխանության համար բավականաչափ ամուր հենարան չէին կարող լինել, քանի որ հակված էին անհնազանդություն ցուցաբերելու: Այդ ժամանակ առաջացավ առավել հուսալի բանակի ստեղծման անհրաժեշտություն: Սակայն թուրքերի մարդկային ռեսուրսները բավականին սահմանափակ էին, այդ պատճառով սուլթանական իշխանության ռազմական հենքի ամ-

54 Տե՛ս անդ, էջ 285:

55 Տե՛ս **Коджа Хюсеин**, Указ. рукопись ИВ, С 564, տ. 46-6. Об этом рассказывает и Ашик-пашазаде в своей «Истории», на стр. 41.

56 Տե՛ս **Коджа Хюсеин**, տ. 47-a. Ի միջի այլոց թուրքերի կողմից Իզնիկի նվաճումից անմիջապես հետո այնտեղ գտնվող Իբն-Բատուտան հայտնում է, որ «քաղաքն ավերված է եւ բնակիչները սուլթանի ծառաների ոչ մեծ խումբ էին կազմում» (سياحتنامه ابن بطوطه). Тур. перевод М. Шерифа, Стамбул, 1333 г. хиджры (1915), էջ 342:

բապնդման նպատակով որոշվեց օգտագործել նվաճված բնակչությանը, որի նկատմամբ կարելի էր ավելորդ նրբանկատություն չցուցաբերել: Օրհանի մերձավորները, որոնք պաշտոնով հավասար էին նրա եղբայր Ալաէդդին-փաշային, գալով այդ եզրահանգմանը, սուլթանին հայտարարեցին. «Նվաճված են քյաֆիրներով եւ իրենց երեխաներով բնակեցված բազմաթիվ շրջաններ: Նրանց տղամարդիկ ու կանայք վերածվել են ստրուկների: Նրանք բոլորը քո ստրուկներն ու ստրկուհիներն են: Որպես զինվորական պարտականություն՝ քյաֆիրների երեխաներից մի քանի հազար հոգի վերցնելն օրենքով ու կարգով թույլատրելի է եւ հնարավոր»[57]: Այսպիսով՝ ստրուկներ եւ ստրկուհիներ, ահա ով էր նվաճված բնակչությունը թուրքական վերնախավի համար:

Գիտենք, որ թալանը, հողերի եւ գերիների զավթումը թուրքական նվաճումների գլխավոր խթանն էին: Սկզբնաղբյուրների միջոցով ծանոթանալով թուրքերի կողմից Բալկանյան թերակղզու երկրների նվաճման պատմությանը՝ ստանում ենք սարսափելի պատկեր: Յուրաքանչյուր արշավանք, Սերբիայի, Բոսնիայի, Բուլղարիայի եւ այլ երկրների յուրաքանչյուր քաղաքի եւ շրջանի զավթում ուղեկցվում էր բնակչության մի մասի ոչնչացմամբ եւ մյուս մասի կողոպուտով, բնակավայրերի ավերմամբ, տասնյակ հազարավոր մարդկանց գերեվարմամբ ու ստրկացմամբ: Աղբյուրներում յուրաքանչյուր արշավանքի նկարագրություն անփոփոխ ավարտվում էր հետեւյալ արտահայտությամբ. «Ամայացնելով շուրջն ամեն ինչ՝ մուսուլմանների համար անթիվ ավար վերցրեցին»[58], կամ՝ «Վերադառնալով արշավանքից՝ իրենց հետ բերում էին անթիվ ավար, գերիներ եւ կտրված գլուխներ»[59]: Հաճախ առանձին շրջանների նվաճման ժամանակ ամբողջ մարզի բնակչություն տարհանվում էր Անատոլիա[60] եւ այլն: 1438 թ. Հունգարիայի հարավային շրջանների հարձակմանը մասնակցած ժամանակագիր Աշըք-փաշա-զադեն հայտնում է, որ այդ արշավանքի ժամանակ տարված գերիներն այնքան շատ էին, որ ստրկուհի-գերուհի կարելի էր «ձեռք բերել» երկարաճիտ կոշիկների դիմաց: Ինքը՝ Ահմեդ-փաշա-զադեն, այս արշավանքից բերեց ինը ստրկուհի, որոնցից երեքին վաճառեց 300-ական աքչեով, իսկ մյուսներին՝ երկու հարյուր[61]:

Դեպի Ադրիանապոլիս, Բուրսա, իսկ այնուհետեւ նաեւ Ստամբուլ շարունակաբար հոսում էր վիթխարի ռազմական ավար, որը նպաստում էր ռազմաֆեոդալական վերնախավի հարստացմանը, նրա տնտեսական եւ քաղաքական դերի ամրապնդմանը: Թալանված միջոցներով պետության խոշոր քաղաքներում սկսեցին կառուցել պալատներ, մզկիթներ, մեդրեսեներ, քա-

57 **Коджа Хюсеин**, Указ. рукопись ИВ, տ. 45-а.

58 **Мюнеджжим-баши**, т. III, с. 285, 290, 293. **Коджа Хюсеин**, Указ. рукопись, лл. 28-б, 41-а и т. д.

59 **Мюнеджжим-баши**, т. III, с. 294.

60 Տե՛ս անդ, էջ 289:

61 Տե՛ս **Ашик-паша-заде**, էջ 125:

ռավան-սարայներ եւ այլն: Ղեկավար խավի բարքերի պարզությունն սկսեց անհետանալ՝ իր տեղը զիջելով շքեղությանն ու շռայլությանը: Այսպես օրինակ՝ արդեն 1387-ին Ռումելիայի բեյլերբեյ նշանակված առավել աչքի ընկնող սուլթանական էմիրներից մեկը՝ Թիմուրթաշ-փաշան, սուլթան Մուրադի որդի Բայազիդի ամուսնության կապակցությամբ, որպես նվեր, պալատ բերեց 100 գըլման (տղա-ստրուկ) եւ 100 ստրկուհի: Ընդ որում, նրանցից կազմվել էր գունագեղ երթ. առաջին 10 գըլմանը տանում էր ոսկով լի մեկական արծաթյա գավաթ, հաջորդ 10 գըլմանը՝ արծաթով լի մեկական ոսկյա գավաթ, մնացած 80 գըլմանը՝ արծաթյա մոմակալներ, կժեր, սկահակներ, սկուտեղներ եւ այլ արժեքավոր իրեր: «Հարստությունը, - ամփոփում է ժամանակագիրը, - ապշեցրեց օտարերկրյա դեսպաններին»[62]:

Այս ամենը ձեռք էր բերվում թալանի միջոցով, իսկ թալանը, անշուշտ, քեմալական կեղծ պատմաբանների այդքան գովերգած «մարդասիրության» հետ որեւէ ընդհանրություն ունենալ չի կարող: Թուրք զավթիչներին որպես «ֆեոդալիզմի կողմից կեղեքված» քրիստոնյա բնակչության «արդար եւ ողորմած» պաշտպան ներկայացնելով՝ քեմալական բուրժուա ազգայնամոլները միտումնավոր կեղծում են պատմությունը՝ ընթերցողից թաքցնելով օբյեկտիվ իրականությունը: Եւրոպական ֆեոդալիզմին հակադրելով օսմանների ռազմաքաղաքական պետական համակարգը՝ պատմության քեմալական կեղծարարներն ամեն կերպ քողարկում են թուրքերի մոտ առկա ֆեոդալիզմի դասակարգային բնույթը: Նրանք թուրքերի քաղաքական համակարգը պատկերում են յուրահատուկ, «ամենաարդար» վարչական, «զուտ» քաղաքական կազմակերպության տեսքով: Օսմանյան պետությունում հողերի բաշխումը, սեփականության եւ հողօգտագործման ձեւերը, հարկահանության մեթոդներն ու ձեւերը (այսինքն՝ աշխատավորների շահագործումը) նրանք դիտարկում են մեկընդմիշտ տրված մուսուլմանական «ամենակատարյալ» իրավունքի շարակարգում, որն իբր առավել կատարելագործվել է թուրք նվաճողների կողմից[63]: Այս կեղծ պնդումը, որը, ինչպես կտեսնենք ստորեւ, լայնորեն քարոզվում է ժամանակակից թուրք կեղծ գիտնականների կողմից, ինչպիսիք են Օմեր Բարքանը եւ նրա նմանները, նպատակ ունի մի կողմից պատկերելու թուրք զավթիչներին որպես «մշակութագործներ» եւ նվաճված ժողովուրդների «ազատարարներ», իսկ մյուս կողմից՝ հիմնավորելու թուրքական հասարակության մեջ դասակարգային պայքարի բացակայության վերաբերյալ իբր միայն թուրքերին հատուկ դասակարգային շահերի մշտական «ներդաշնակության» մասին հետադիմական ֆաշիստական «տեսությունը»:

Սակայն աղբյուրները ցույց են տալիս, որ թուրքերը Բյուզանդիայի եւ

62 **Мюнеджжим-баши**, с. 295.

63 Տե՛ս օրինակ՝ **J. H. Uzunçarşılı,** Osmanlı devletinin merkez ve bahriye teşkilâtı, Ankara, 1948, էջ 320. **Hüseyin Namık Orkun**, Turk Tarihi, Ankara, 1946, c. II, էջ 142, c. IV, էջ 241-245:

Բալկանյան թերակղզու ժողովուրդներին ոչ թե ֆեոդալական կապանքներից ազատություն բերեցին, այլ ստրկություն եւ ոչնչացում՝ մի քանի հարյուրամյակով ետ մղելով նվաճված ժողովուրդների զարգացումը: Պատմական ընդհանուր առումով թուրքական գերիշխանությունը զավթված երկրների համար մեծագույն աղետ էր՝ դատապարտելով նրանց երկար եւ տանջալից անցնելու զարգացման արդեն վերապրած փուլը՝ ավելի ծանր օտար լծի պայմաններում:

Արեւմտաեւրոպական պատմագիտական գրականության մեջ գոյություն ունեցած այն տարբերակը, ըստ որի՝ թուրքերն սկզբնական շրջանում նվաճված ժողովուրդներին նեղություն չէին պատճառում, մեր կարծիքով, որպես աղբյուր հենվում է Բալկանյան թերակղզու որոշ շրջանների ֆեոդալական վերնախավի այն ներկայացուցիչների տեսակետների վրա, որոնք անցել էին թուրքական սուլթանի մոտ ծառայության եւ դրա արդյունքում հաճախ հանդես էին գալիս թուրքական պետության եւ դրա ռազմաքաղաքական համակարգի ուղղակի ջատագովների դերում: Այսպես օրինակ՝ բյուզանդացի Կրիտովուլ Իմբրոսսացին ծառայում էր սուլթան Մեհմեդ Ֆաթիհին եւ խանդավառ գովեստ էր գրել այդ տիրակալի պատվին[64]: Սակայն ո՛չ Կրիտովուլը, ո՛չ էլ քրիստոնյա ֆեոդալների շարքից իր նման դավաճանները բնավ չէին արտահայտում տրամադրվածությունը ժողովրդական զանգվածների, որի ուսերին էր ընկել թուրքերի ռազմական հարվածների ողջ ծանրությունը եւ այդ օտարերկրյա շահագործողների լուծը: Ընդհակառակը, ինչպես արդեն վերը նշել ենք, ուրացողները՝ քրիստոնեական ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչները, հայտնի չափով թուրք տիրակալների հենարանն էին՝ իրենց սեփական ժողովրդի հանդեպ բռնի քաղաքականության իրականացման գործում:

Այս իրադրությունը հաստատվում է այն փաստաթղթերով, որոնք հրապարակել են հենց իրենք՝ քեմալական պատմաբանները՝ փորձելով դրանց տալ կեղծ մեկնաբանություն: ԺԷ. դ. առաջին կեսին վերաբերող այսպիսի փաստաթղթերից մեկում կարդում ենք Բուդայի շրջանի թուրք բեյլերբեյի հետեւյալ դիմումը պալատինյան վոյեվոդա Նիկոլայ Էսթերգազիին. «Դուք, մեր ընկեր, գիտեք, որ ռայայի երջանկությունն իր չիֆթը (հողաբաժին - Ա. Տ.) մշակելու եւ ցանք կատարելու մեջ է: Հարկ է կանխել ռայայի՝ սուր կրելու ձգտումը: Հատկապես Դուք, մեր ընկեր, մշտապես հայտնեք քաղաքների մասին՝ նշելով, որ ռայայի ոչ ցանկալի գործողությունները կանխվել են: Եւ ահա Ձեր այսպիսի գործողություններով դրանք ավարտվում են... Իմ հարգարժան ընկեր, Դուք նպաստում եք (մեր) աստվածատուր դաշինքի ամրապնդմանը՝ հանուն մշտական բարի մտադրությունների, եւ ճիշտ միջոցներով արմատախիլ եք անում ծագող անկարգությունները»[65]:

64 Տե՛ս **K. Müller,** Fragmenta Historicorum Graecorum, t. V, Paris, 1883:

65 **Tayib Gökbilgin,** Macaristan'daki türk hâkimiyeti devrine ait bazı notlar. Türkiyat Mecmuası, 1942, c. VII-

Թուրք տիրակալները, որպես իրենց հենարան, խիստ հետաքրքրված լինելով նվաճողների կողմն անցնող տեղացի ֆեոդալներով, վերջիններիս նկատմամբ որոշ ժամանակ «բարի եւ ողորմած» էին: Այստեղ զարմանալի ոչինչ չկա: Այս իրադրությունը, բնականաբար, առաջացնում էր այսպիսի նախանձախնդիր ծառաների «երախտագիտությունը» սուլթանների նկատմամբ: Տրանսիլվանիայի բեյերից մեկի՝ Բ. Գաբորի նամակում կարդում ենք. «Հանգուցյալ Ահմեդ Ա. սուլթանից շատ բարիք ենք տեսել: Եթե անշնորհակալ քայլեր կատարեք նրա զավակների եւ Օսմանյան պետության հանդեպ, ապա Թուրքիայում մեր կերած աղն ու հացը կմնան մեր ատամներում»[66]:

Նմանատիպ փաստաթղթի վերլուծությունը անհերքելի պարզությամբ ցույց է տալիս, որ թուրք տիրակալների եւ տեղական ֆեոդալական վերնախավի միջեւ դաշինքն ամենեւին չէր նշանակում նվաճված ողջ բնակչության հանդեպ թուրքական սուլթանների բարյացակամություն, ինչպես դա փորձում են ներկայացնել թուրք ազգայնականները: Բերված փաստաթղթերից առաջինը վառ ապացույց է, որ նվաճված քաղաքների եւ բնակավայրերի բնակչությունը երբեք չէր հաշտվում թուրքական գերիշխանության հետ եւ զենքը ձեռքին համառ պայքար էր մղում զավթիչների դեմ՝ հրաժարվելով սեփական աշխատանքով ծառայել նրանց: Տեղական ազնվականությունը զավթիչներին հարկավոր էր միայն ժողովրդին հնազանդության մեջ պահելու համար: Տվյալ օրինակով կրկին տեսնում ենք՝ ինչպես ժամանակակից թուրք պատմաբանները միտումնավոր կեղծում են աղբյուրները՝ սեփական քաղաքական նպատակներով, հանում են դրանցից սոցիալական բովանդակությունը, խեղաթյուրում են փաստերը եւ տալիս են նվաճված ժողովուրդների հանդեպ թուրքերի գերիշխանության էության եւ բնույթի սխալ, կեղծ պատկեր:

Նվաճվածների հետ համեմատած՝ պատմական զարգացման ավելի ցածր մակարդակում գտնվող զավթիչներն ի վիճակի չէին եւ իրականում չէին էլ պատրաստվում արմատապես փոխել հպատակ հողագործների վիճակը: Թուրքական նվաճումների հիմնական շարժիչ ուժը ֆեոդալականացվող վերնախավի՝ նոր հողատարածքներ եւ դրանցում բնակվող հպատակներ ձեռք բերելու ձգտումն էր: Բալկանյան թերակղզու երկրներում գոյություն ունեցող ֆեոդալական շահագործման համակարգը լիովին համապատասխանում էր զավթիչների շահերին: Պահպանել այս համակարգը եւ օգտագործել այն տեղական ֆեոդալական վերնախավի մի մասի օժանդակությամբ, կառավարման տեղական որոշ ձեւերի եւ նույնիսկ կրոնական հաստատությունների օգնությամբ էապես ավելի ձեռնտու էր, քան ցանկացած այլ եղանակով քանդել այն: Նվաճողների համար որեւէ իմաստ չուներ գյուղացիներին իրենց հողատարածքներից վռնդելը, եւ կարեւոր էր քաղաքների արհեստավորների աշխա-

VIII, cüz I, s. 207.

66 Անդ, էջ 206:

տանքը սեփական շահի համար օգտագործելը: Բայց այդ քաղաքականությունը բնավ թելադրված չէր ալտրուիստական մղումներով, այլ ուներ զուտ եսասիրական դրդապատճառներ: Հենց այս հանգամանքը նկատի ուներ Կ. Մարքսը՝ ասելով, որ օսմանյան ռազմաֆեոդալական համակարգը չի ազդել արտադրական հարաբերությունների էության վրա, որոնք ձեւավորվել էին մինչեւ թուրքական նվաճումները. «Արեւելյան բռնապետությունը շոշափում է քաղաքային ինքնակառավարումը միայն այն ժամանակ, երբ բախվում է նրա անմիջական շահերին, բայց այն պատրաստակամությամբ ընդունում է այս հաստատությունների գոյությունն այնքան ժամանակ, որքան դրանք իրենից վերցնում են ինքնուրույն որեւէ բան անելու պարտականությունը եւ ազատում են մշտական կառավարման հոգսերից»[67]: Սակայն հետագայում, ինչպես դա քաջ հայտնի է, թուրքական ֆեոդալական վերնախավի կողմից բալկանյան ժողովուրդների թալանչիական շահագործումը բավականին ծանր անդրադարձավ այս ժողովուրդների արտադրական ուժերի եւ հարաբերությունների զարգացման վրա՝ դառնալով նրանց պատմական զարգացման հիմնական արգելակներից մեկը: Հենց այս մասին է, որ քեմալական պատմաբանները գերադասում են լռել, քանի որ փաստերը հերքում են նրանց բոլոր կեղծիքները Բալկաններում թուրքական գերիշխանության վերաբերյալ:

Այժմ անցնենք քեմալական պատմաբանների այն պնդումների վերանայմանը, որոնց համաձայն՝ Օսմանյան պետությունն իբր յուրահատուկ, յուրօրինակ թուրքական կառավարման համակարգի կրող էր, համակարգ, որը բացառում էր դասակարգային հակադրությունների ու պայքարի ի հայտ գալը, որն իբր վեր էր կանգնած հասարակությունից եւ թուրքական սուլթանի հպատակների ընկերային (սոցիալական) ու ազգային շահերի «կատարյալ ներդաշնակության» կազմակերպիչն էր:

Այս հակագիտական եւ կեղծ «տեսության» ականավոր դրոշակակիրներից է բուրժուա-ազգայնական Օմեր Բարքանը: Նա Օսմանյան կայսրությունում գյուղացիների իրավական կարգավիճակին նվիրված իր աշխատություններից մեկում[68] Թուրքական պետությունը նկարագրում է որպես «անհավատների դեմ պատերազմելու ընդհանուր շահեր ունեցող» տարբեր դասերի միջեւ «համագործակցության» կազմակերպչի: «Գյուղացիները եւ ռազմարվեստից զատ գործերով զբաղված այլ դասերը, - գրում է նա, - կազմում էին պետական եւ ռազմական գործում զինվորական դասի հետ համագործակցող բնական ուժերը»[69]:

Արդարացնելով Թուրքական կայսրության ռազմական բնույթը՝ Օ. Բար-

67 **К. Маркс и Ф. Энгельс,** Соч., т. X, с. 722.

68 Տես **Ömer Lütfi Barkan,** Osmanlı İmparatorluğunda çiftçi sınıfların hukukî statüsü. Ülkü, c. IX-X, թ. 49, 50, 53, 56, 58, 59:

69 Անդ, թ. 49, էջ 34:

քանը «բնական» է համարում գյուղացիների կողմից հարկի վճարումը. պարզվում է՝ գյուղացիներն այս միջոցով միայն արժանին էին հատուցում զինվորական դասին. նրանք տալիս էին բերքի մի մասը «այն ամենեւին էլ ոչ դյուրին զինվորական պարտականության դիմաց, որ ստանձնել էին կառավարությունը եւ զինվորական դասը»: Վերջիններս պետք է պայքար մղեին «քյաֆիրների» կառույցի, որն Օ. Բարքանի կարծիքով՝ «գյուղացիների նկատմամբ սարսափելի եւ կործանարար գերիշխանության օրինակ էր», եւ նրանց շատ ավելի հետամնաց համակարգի դեմ[70]: Օ. Բարքանն արդեն «կատարյալ» է համարում, որ Օսմանյան կայսրությունում «սոցիալական յուրաքանչյուր խմբի դեպքում գոյություն ունեին ժառանգների համար անփոփոխ եւ ամեն դասի համար հավիտյան ամրագրված համապատասխան հասարակական գործառույթներ»[71]: Այս կառույցը, նրա պատկերացմամբ, օրինակելի է: Կեղծարարի մոտ հատուկ գորով է առաջացնում Օսմանյան պետությունում իբր գոյություն ունեցած «դասերի եւ պարտականությունների ներդաշնակ բաժանումը»: Հիացած լինելով, որ «ռայայի որդին մնում է ռայա»[72] եւ որ նրա՝ հողից գանձվող տուրքերն իր վրա ամրագրված են հավետ՝ Օ. Բարքանն այս կառույցն անվանում է «պլանային տնտեսության եւ էտատիկ քաղաքականության համակարգ»[73]:

Դժվար չէ հասկանալ, թե ում սոցիալական պատվերն է կատարում հետադիմական Օ. Բարքանը՝ միտումնավոր խեղաթյուրելով Թուրքական պետության զարգացման հասարակական-պատմական գործընթացը: Թուրքիայի ղեկավար բուրժուա-կալվածատիրական վերնախավի համար խիստ կարեւոր է ժողովրդական զանգվածներին ներշնչել հասարակության՝ իշխող, կառավարող եւ կառավարվող դասերի բաժանվելու հարատեւության մասին միտքը: Կարեւոր է նաեւ ժողովրդին համոզել, որ իշխող դասի պարտականությունները գյուղացիների եւ աշխատավորների պարտավորություններից պակաս բարդ եւ ծանր չեն: Աշխատավոր գյուղացիական զանգվածների կապալային վիճակի մշտական ամրագրում, ահա՝ «համագործակցության» ինչպիսի կատարելատիպի մասին են այդքան քաղցրորեն խոսում Թուրքիայի ժամանակակից ղեկավարների սպասավոր «գիտնականները», ահա՝ ինչ են գովերգում բուրժուա-ազգայնականության թուրք գաղափարախոսները: Նրանք, պատմության կեղծման եւ կարծեցյալ պատմական «ազգային» սովորույթներին հղում անելու միջոցով, իրենց կողմից արդարացվող՝ աշխատավորների դաժան ճնշումների համակարգը հակադրում են նրանց աշխատանքային պայմանների եւ կյանքի բարելավման օրինական պահանջներին:

70 Տե՛ս անդ, թ. 49, էջ 36:
71 Անդ, թ. 50, էջ 101:
72 Տե՛ս անդ:
73 Անդ, էջ 104:

Հայտնի է, որ Օսմանյան պետությունն իր գոյության առաջին իսկ օրերից զարգանում էր սոցիալական սուր հակասությունների եւ դասակարգային մշտական պայքարի պայմաններում: Արդեն վերը տեսանք, որ թուրքական սուլթանների կողմից հարեւան ժողովուրդների դեմ տարվող կողոպտիչ պատերազմներն առաջին հերթին ծառայում էին պետության իշխող վերնախավի՝ նախ օսմանյան ցեղերի զինվորական վերնախավի, ապա՝ հողատեր-ֆեոդալների հարստացման նպատակին: Հողատարածքներն ու կողոպտված հարստություններն անցնում էին վերնախավի ձեռքը, ինչը չէր կարող չնպաստել իշխող վերնախավի եւ ժողովրդական զանգվածների միջեւ սոցիալ-տնտեսական դրության տարբերությունների մշտական աճին: Ժամանակի ընթացքում ամրապնդված պետական իշխանական համակարգի՝ որպես հողատերերի կողմից հողագործ դասի նկատմամբ բռնություն կիրառող մարմնի ամենակարեւոր գործառույթներից էր արտադրող դասի շահագործման հարցում իշխող դասին օժանդակություն ցուցաբերելը: Հայտնի են թուրք սուլթանների օրենսդիր փաստաթղթերը, որոնք համապատասխանում են իշխող դասի հենց այս պահանջներին, ինչպես նաեւ շահագործվողների դիմադրության ճնշման խնդրին: «Կառավարությունները Արեւելքում, - նշում է Ֆ. Էնգելսը, - միշտ ունեցել են միայն երեք գերատեսչություն. ֆինանսներ (կողոպուտ երկրի ներսում), պատերազմ (կողոպուտ երկրի ներսում եւ այլ երկրների թալան) եւ հասարակական աշխատանքներ (վերարտադրության խնամք)»[74]:

Հենց Օ. Բարքանի կողմից հրապարակված փաստաթղթերն ամբողջովին հերքում են նրա կեղծ հայեցակարգը: Այս փաստաթղթերը բովանդակում են Ֆ. Էնգելսի նշած՝ արեւելյան բռնակալության էության խորը վերլուծությունը վառ հաստատող պատմական հարուստ նյութ: Օսմանյան պետության ֆինանսական գերատեսչությունն ի սկզբանե ծառայում էր ժողովրդական զանգվածների կողոպտման նպատակին: Սուլթանական կառավարության ֆինանսական գերատեսչությունը նախանձախնդրորեն հոգ էր տանում, որ չտուժեն պետական գանձարանի եւ ավատատեր-ֆեոդալների շահերը: Իսկ եթե փաստաթղթերում խոսքը անմիջական արտադրողի «հովանավորման» մասին էր, ապա, իհարկե, այս կեղծավոր պետական դարձվածաբանության ետեւում թաքնված էր բոլորովին այլ բան. պետական իշխանության կողմից ռայայի հանդեպ թվացյալ «հովանավորությունը» դարձյալ պայմանավորված էր գանձարանի եւ հողատերերի շահերով. արտադրողը չպետք է զրկված լիներ վերարտադրության համար անհրաժեշտ պայմաններից, այլապես կարող էր իշխող դասի եկամուտների այս հիմնական աղբյուրի «հյուծման» վտանգ առաջանալ:

«Ռայային հովանավորելը, - կարդում ենք փաստաթղթերից մեկում, -

74 **Կ. Маркс и Ф. Энгельс,** Избранные письма, Госполитиздат, 1948, с. 75.

Բարձրագույն պետության կարեւորագույն գործերից մեկն է: Հարկ է միայն խոչընդոտել ռայայի՝ զինվորական խավին միանալը: Եթե սիփահի դառնա նա, ով սիփահիի որդի չէ, ապա դրան կհետեւի օրենքի խախտումը, քանի որ այդ պատճառով ռայայի պակաս կառաջանա: Դրա արդյունքը կլինի եկամուտների պակասորդն ու կտուժի Բարձրագույն պետության ընդհանուր ունեցվածքը: Ռայան մարդկության բարերարն է: Գանձարանի հարստությունը կախված է ռայայից: Սուլթանական իշխանությունը կարող է գոյություն ունենալ միայն ռայայից ստացված գանձարանի շնորհիվ: Սուլթանի մշտական հոգսն է, որ ռայան չցրվի, այլ թվով ավելանա: Ողորմածություն ցուցաբերելը եւ հարստահարողներից նրան պաշտպանելը սրբազան պարտք է: Սակայն չի կարելի թույլ տալ, որ ռայան հարստանա: Չի կարելի թույլ տալ, որ ռայայի հագուստը, ձին եւ տնային կահ-կարասին զարդարված լինեն նույն կերպ, ինչ սիփահիինը»[75]:

Բերված փաստաթուղթը ԺԶ. դ. Թուրքիայի բարձրաստիճան պետական պաշտոնյայի դատողությունն է: Օ. Բարքանն օգտագործում է այս փաստաթուղթը, որ շեշտի իշխող շրջանակների «հոգատարությունը» գյուղացիների նկատմամբ: Սրանով թուրք կեղծ պատմաբանը քողարկում է փաստաթղթի հիմնական բովանդակությունը: Իրականում հարկատու բնակչության հանդեպ «հոգատարությունը» հանգեցնում էր իշխող դասի եկամուտների ավելացմանը: Այս դրույթը մասնավորապես հաստատվում է ԺԷ. դ. թուրք հեղինակներ Այնի Ալիի, Քոչիբեյի, Քյաթիբա Չելեբիի, Հեզարֆեյինի տրակտատների քաղաքական-տնտեսական վերլուծությամբ. այստեղ հստակ ընդգծվում է, որ պետական գանձարանի եւ ավատատերերի բարեկեցության աղբյուրը ռայան (գյուղացին) է:

Օ. Բարքանը, հենվելով վերը մեջբերված փաստաթղթի վրա, փորձում է ապացուցել, որ ռայան արժանապատվությունից զուրկ, իրավազուրկ չէր: Բայց այս փաստաթուղթը նախ եւ առաջ ցույց է տալիս, որ Թուրքական պետությունը, սպասարկելով վերնախավի շահերը, բոլոր միջոցներով ոտնահարում էր գյուղացիության արժանապատվությունը եւ պահպանում էր տերսիփահիների իրավունքներն ու արտոնությունները «ժողովրդի հնարավոր ոտնձգություններից»:

Գյուղացիների ֆեոդալական լուծը ավելի ու ավելի անտանելի էր դառնում: ԺԵ. դ. կեսերին գյուղացիներին հողին ամրակցելու համակարգը հաստատվում է սուլթանների իրավական փաստաթղթերով: Չնայած այս ամենին՝ հարկերից խեղդվող հողագործները թողնում են իրենց հողաբաժինները եւ փախչում՝ փորձելով փրկվել ֆեոդալական լծից, «դասակարգերի ներդաշնակ համագործակցության» այն համակարգից, որը գովերգում են ներկայիս քեմալական պատմաբանները: Օ. Բարքանի բերած փաստաթղթերը վկայում

75 "Ülkü", № 59, s. 422.

են ոչ այլնի, քան Օսմանյան ֆեոդալական պետության հենց այս շահագործման քաղաքականության մասին:

Օ. Բարքանը հայտարարում է, որ քեմալական պատմաբանները պետք է հրաժարվեն «որոշ սոցիալիստական ուսմունքներին հետեւելով՝ ամենուր դասակարգային պայքար եւ շահագործում փնտրելուց, այլ պարտավոր են հաստատակամություն ցուցաբերել տվյալ համակարգը օբյեկտիվորեն հասկանալու համար»[76]: Սակայն հենց պատմական օբյեկտիվ իրականության փաստերը, որոնցից չեն կարող խուսափել քեմալական ընկերաբանները, ցույց են տալիս, որ Օսմանյան պետության գոյության առաջին իսկ օրերից սկսած նրա պատմությունը լի է դասակարգային սուր պայքարով: Այս ապացուցելու համար բավական է թվարկել ֆեոդալական շահագործման, սուլթանական իշխանության կողմից ժողովրդի ճնշման եւ բռնության դեմ առավել հայտնի ազգային ապստամբությունները՝ շեյխ Բեդրէդդինի (1413-1417), Շայթան Քուլուի (1511), Ջելալի (1519), այսպես կոչված՝ «Ջելալիների» ապստամբությունների շարքը ԺԶ. եւ ԺԷ. դդ. ընթաքցում (Քալենդերի, Քարա Յազըջըի, Ջանփուլադի եւ շատ ուրիշների)[77]: «Դասակարգային համագործակցության» եւ «սոցիալական ներդաշնակության» մասին քեմալական պատմաբանների հեքիաթները այս փաստերի լույսի ներքո լիովին մատնում են նրանց՝ որպես պատմության սուտ եւ անամոթ կեղծարարների:

Կանգ առնենք քեմալական պատմաբանների վերջին պնդման վրա, որի համաձայն՝ Օսմանյան կայսրության անկումը բացատրվում է գլխավորապես սուլթանների եւ պետական բարձրաստիճան պաշտոնյաների անփութությամբ, որոնք ԺԶ. դ. վերջերին հեռացան պետական կառավարման «ավանդական ազգային սկզբունքներից» եւ այսպիսով քանդեցին հին կարգերը:

Այս պնդումը ոչ մի ընդհանուր բան չունի պատմական ճշմարտության հետ: Օսմանյան պետության կազմալուծումն ու անկումը չի կարելի վերագրել նրա տիրակալների «անփութությանը», ինչպես դա փորձում են ներկայացնել շատ պատմաբաններ[78]: Սկսած Մուրադ Դ.-ից եւ վերջացրած մեծ վեզիրներով՝ քիչ չէին այնպիսի գործունյա անձինք, որոնք եռանդուն քայլեր էին ձեռնարկում պետության կազմալուծումը կանխելու համար: Սակայն նրանց գործողությունները ձախողման էին դատապարտված ոչ թե անընդունակ լինելու պատճառով, այլ որովհետեւ նրանց անցկացրած միջոցառումները հակասում էին Օսմանյան կայսրության պատմական զարգացման ընդհանուր միտումներին:

ԺԶ. դարի վերջերին աստիճանաբար ուժգնանում է ֆեոդալական ապա-

76 "Ülkü", № 59, s. 36.

77 Տես **А. С. Тверитинова,** Восстание Кара Языджи-Дели Хасана в Турции, Л., 1946: Ցավոք, մնացած ապստամբությունները դեռ չէն լուսաբանվել խորհրդային գրականության մեջ:

78 Տես "Tarih", c. III, էջ 115. **Yusuf Akçura**, Osmanlı devletinin dağılma devri:

կենտրոնացումը, տեղի է ունենում կենտրոնական իշխանության հեղինակության անկում, նկատվում է ֆեոդալիզմի այս փուլին բնորոշ քաղաքական մասնատվածություն, կախյալ գյուղացիության ֆեոդալական շահագործման անչափ ուժեղացում եւ, որպես այս ամենի հետեւանք, պետության տնտեսական հիմքի թուլացում՝ գյուղացիական տնտեսության սնանկացում, երկրի ռազմական ուժի ընդհանուր անկում: Բոլոր այս երեւույթները սաստկանում էին ոչ թուրք ժողովուրդների կողմից օտար լծից ազատվելու գործուն պայքարով:

Պատմական զարգացման տրամաբանական, օրինաչափ ընթացքը դեպքերի նման հաջորդականությունն անխուսափելի էր դարձնում:

Քեմալական պատմաբանները, Թուրքիայի միջնադարյան պատմությունը միտումնավոր կեղծելու նպատակով, իրենց առջեւ խնդիր են դրել իբր Օսմանյան պետության զարգացման «յուրօրինակ» պատմական ուղին պայմանավորող թուրքերի յուրահատուկ «ազգային» հատկությունների մասին մեծախոսություններով քողարկել թուրքական պետության դասակարգային էությունը եւ դրանում առկա պայքարը: Իդեալականացնելով թուրքական միջնադարը՝ ժամանակակից քեմալական ընկերաբանները (սոցիոլոգները) թուրք ժողովրդի համար «վառ հեռանկարներ» են գտնում հատկապես հասարակական կյանքի այս հին, «ավանդական» թուրքական ձեւերին վերադառնալու մեջ: Այսպես՝ 1948 թ. III պատմագիտական կոնգրեսին ելույթ ունեցող Սադի Սելենն իր զեկույցն ամբողջովին նվիրել էր միջնադարյան թուրքական ֆեոդալական քաղաքի՝ քասաբայի իդեալականացմանը: Քարոզելով բնակչության գերաճի եւ իբր դրա արդյունքում առաջացող՝ հողատարածքի պակասի վերաբերյալ կեղծ գիտական, մարդատյաց մալթուսական «տեսությունը» (ինչպես հայտնի է՝ մալթուսականությունը ներկայումս համառորեն իր կողմն է գրավում իմպերիալիզմի ջատագովներին, որոնք այս հետադիմական «ուսմունքի» օգնությամբ փորձում են արդարացնել ոչնչացնող պատերազմների եւ գաղութարար կողոպուտների իմպերիալիստական քաղաքականությունը)՝ Սադի Սալենը խոսում էր գյուղական շրջաններում միջնադարյան օրինակով առավել խիստ վերահսկողություն հաստատելու մասին: Այս կապակցությամբ նա անհրաժեշտ է համարում վերականգնել նախկին իմաստով գավառական քաղաքները՝ քասաբաները: Քասաբան միջնադարում կենտրոն էր, որը վերահսկում էր ենթակա գյուղերի ճորտ գյուղացիության աշխատանքը, եւ այդպիսով պետական իշխանության մարմինները կարող էին իբր ավելի գործուն վերահսկել հողագործությունը[79]: «Կատարյալ» անցյալին վերադառնալու քարոզչությունը Սադի Սելենի եւ նրա նման «սոցիոլոգների» համար ուներ միայն մեկ իմաստ՝ գտնել ճշմարտանման բացատրություն վաղուց

79 Տե՛ս **Sadi Selen,** XVI-XVII asırlarda Anadolunun köy ve kasaba hayatı. III Türk Tarih Kongresi, Ankara, էջ 590-598:

արդեն ամերիկյան գաղութի վերածված Թուրքիայի իշխող դասի ձգտմանը, ավելի ստրկացնել գյուղացիական զանգվածներին, նրանց վրա դնել ժամանակակից իշխող բուրժուա-հողատեր խավի կերակրման ծանր բեռը, ուժեղացնել ԱՄՆ-ի մոնոպոլիստների պատվերով Թուրքիայի ղեկավարների կողմից իրականացվող սպառազինման մրցավազքը:

Հետադիմական թուրքական կառավարության միլիտարիստական քաղաքականությունը նույնպես իր արդարացումն է գտնում քեմալական պատմաբանների երկերում, երբ նրանք սկսում են գովերգել օսմանների ռազմական կազմակերպությունը՝ դարձնելով այն թուրքական «ազգային» յուրահատուկ որակ: Նրանց կարծիքով՝ ռազմական ուժը միշտ եղել է թուրքական հզորության հիմքը: «Ցենիչերիների կորպուսի քանդումը, - գրում է ոմն Շինասի Ալթունդաղը, - ոչ միայն ռազմական պարտությունների պատճառ էր, այլ նաեւ ցնցեց Օսմանյան կայսրության վարչական եւ պետական բոլոր հիմքերը՝ լինելով կայսրության ոչնչացմանը նպաստող առավել էական գործոն»[80]: Նրա կարծիքով՝ ռազմական հզորությունը կարեւոր էր պահպանել բոլոր միջոցներով, քանզի դրանից ուղիղ կախման մեջ էր գտնվում պետության ներքին բարեկեցությունը եւ նրա՝ այլ ժողովուրդների նկատմամբ գերիշխանություն հաստատելու կարողությունը: Այս տեսանկյունից թուրքական ազգը նա դասում է երեք «մեծ ազգերի» թվին, որոնք պատմության ընթացքում իբր կարող եղան «լայնածավալ կայսրություններում միավորել բազմաթիվ ցրված ժողովուրդների, որոնց հեշտությամբ կառավարում էին՝ ստեղծելով բացառապես կայուն համակարգ: Այդ ազգերն են թուրքերը, հռոմեացիները եւ անգլիացիները»[81]:

Այսպիսով, պատմության թուրք բուրժուա-ազգայնական կեղծարարների հիմնական նպատակն է՝ պատմական փաստերի խեղաթյուրման եւ կեղծման միջոցով միջնադարյան Թուրքիայի պատմությանը տալ այնպիսի լուսաբանում, որը կպատասխանի ժամանակակից Թուրքիայի իշխող հանցախմբի քաղաքական խնդիրներին: Թուրքերին՝ որպես ներքին հակասություններ չունեցող եւ բազմաթիվ ժողովուրդներին կառավարելու ունակ «միատարր մեծագույն ազգ» ներկայացնելու նրանց ձգտումն ամբողջովին մատնում է այս բոլոր «տեսությունների» բացահայտ ֆաշիստական էությունը: Քեմալական «պատմաբաններն» ուղղակի խարդախության ճանապարհով ձգտում են, հղում անելով պատմությունից բերված օրինակներին, արդարացում «գտնել» թուրքական հետադիմության հակազգային քաղաքականության համար: Սակայն նրանք լռում են այն փաստերի մասին, որոնք ցույց են տալիս՝ իշխող դասի նվաճողական քաղաքականությունը հենց թուրք ժողովրդի համար

80 **Şinasi Altundag,** Osmanlı İmparatorluğunun vergi sistemi hakkında kısa bir araştırma. Ankara Üniversitesi Dil ve Tarih-Cografya Fakültesi Dergisi, Ankara, 1947, c. V, N 2, p. 196.

81 Անդ, էջ 188:

միշտ ունեցել է կործանարար հետեւանքներ, որ այս՝ միայն ֆեոդալական վերնախավի հարստացմանը նպաստող քաղաքականությունն ուժեղացնում էր նրա տնտեսական եւ քաղաքական իշխանությունը սեփական ժողովրդի հանդեպ, իշխող դասը եւ նրանց պետությունը, հանուն եսասիրական նպատակների հյուծելով եւ հարստահարելով երկրի արտադրական ուժերը, թուրք ժողովրդին մատնեցին տնտեսական եւ մշակութային զարգացման դարավոր հետամնացության: Որպես թուրքերի «ազգային» հատկություն ընդգծելով նրանց «համագործակցող դասերի» բաժանված հասարակության առկայությունը՝ ֆաշիստ գրչակներն ունեն միայն մեկ նպատակ՝ այս դատարկախոսությամբ մթագնել աշխատավոր զանգվածների գիտակցությունը եւ դրանով իսկ հեշտացնել երկրի հետադիմական ուժերի սեւ գործը՝ պատրաստվելով ագրեսիվ հետադիմական պլանների իրականացմանը իմպերիալիստ ԱՄՆ-ի առաջնորդությամբ, ում քծնում են ներկայիս թուրք ղեկավարները եւ ամերիկյան իմպերիալիզմից կախված մյուս երկրների հետ համատեղ հնազանդորեն կատարում են նրա հրամանները: Գովերգելով նվաճված ժողովուրդների հանդեպ թուրք զավթիչների կեղծ քաղաքակիրթ վերաբերմունքը՝ թուրք ֆաշիստական «տեսաբանները» ձգտում են գաղափարախոսական հիմնավորում տալ թուրք բուրժուա-ազգայնականների մարդատյաց, ագրեսիվ պլաններին:

Սակայն սոցիալական ոչ մի դատարկախոսություն, պատմության կեղծարարության ոչ մի փորձ չեն օգնի քողարկել ժամանակակից Թուրքական պետության իրական դասակարգային բնույթը, չեն օգնի Թուրքիայի հետադիմական շրջանակներին խուսափել իրենց հակազգային եւ հակաժողովրդական քաղաքականության համար պատասխանատվությունից:

ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ ԵՒ ԾԱՆՈԹԱԳՐԵՑ
ԱՆՆԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ

SUMMARY

The medieval history of Turkey was subject of different scientific debates, especially after the restitution of Turkish government having as its head Mustafa Kemal Ataturk. In that period turkish historians and specialists of medieval history tried to reinterpret the history of formation and development of the Ottoman Empire. The present Armenian translation of the article of A. S. Tveretinova illustrates, on the basis of some visible examples, the pseudohistoricism of Kemalian period's Turkish historians and scientists.